

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Հրապարակելու է Հ. Վահան Յովհաննէսեանի կրթական, բարոյական եւ հայրենաշունչ պատմը-ւածքներու շարքը. հայ տուններուն զարգմ է, մա-նուկներու երջանկութիւնը՝ իրենց հետաքրքրական բովանդակութեամբ:

Ամէն սրտի յարմար ետտորներ

- 1.- ԱՆԻԷՆ ՔԱՐ ՄԸ ԲԵՐ
- 2.- ԱՐԳԻՆԱՅԻ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ
- 3.- ՍՄԲԱՍԻ ԳԱՆՁԵՐԸ
- 4.- ՇԵՄՔՈՐԻ ԱՓԻՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆԸ
- 5.- ԴՈՅԻԱՆԷԻ ՎՐԷԺԸ
- 6.- ԼԵՌՆԵՐՈՒ ԵՐԳԸ
- 7.- ԲԱԿԻՆ ՉՋՏԻԿԸ
- 8.- ԼԵՋՈՒՆ ՈՐ ԿԸ ՄԵՌՆԻ
- 9.- ՓՈՔՐԻԿ ՍԱՍՈՒՆՅԻՆ
(Շարունակելի)

Հ. ՎԱՀԱՆ ԹՈՂՎԱՆՆԵՍԵԱՆ

ԱՆԻԷՆ

ՔԱՐ ՄԸ ԲԵՐ



Հայրենիքի

Զանգները

1

869 7
3827
Գ. 1

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉԱՒԱԿՆԵՐԸ

Թ-Ի-Խ 1

863.7
3847
0
Բ.1

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՆԻԷՆ ՔԱՐ ՄԸ ԲԵՐ

(Բ. Տպագրութիւն)

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
10917

Ներսէս պապը շատ հիւանդ էր. իր բազմանդամ ընտանիքը սիրով բոլորուած էր անկողնին քով, ամէն հեւք կամ ցաւի հառաչ սրտեր կը ճեղքէին: Նա հին աւանդութեան եւ լաւ օրերու կենդանի յիշատակ էր: Անեցի էր, եւ մեծ ջարդին Արաքսն անցնելով, ազատած էր իր ընտանիքին հետ: Հիմա շատ ծեր էր եւ շատ հիւանդ: Երբեմն երբեմն հառաչանքով Անի՛ կը գոչէր, եւ աչքերուն առջեւ կը բարձրանային մայր եկեղեցին, պարիսպները, աւերակները եւ կարծես ամբողջ Բագրատունիները հետը կը խօսէին, դէմքը կը պայծառանար եւ յետոյ կը մռայլուէր, ու դարձեալ կ'իյնար խոր թմրութեան մէջ:

Օր մը ինքզինքը աւելի լաւ զգաց եւ անկողնին մէջ նստելով, կանչեց իր թոռնիկը՝ Վահէն. բոլորը կարծեցին թէ հին նահապետներու պէս իր վերջին օրհնութիւնը պիտի տայ իր տան սիւնին:

— Վահէ, ըսաւ նա, ես պիտի մեռնիմ, տղաս, ժամանակը հասած է, մահը հոգս չէ, մէկ բան ինձ սաստիկ ցաւ կը պատճառէ, որ սիրելի Անիէն դուրս պիտի մեռնիմ, գէթ քար մը ունենայի այդ օրհնեալ քաղաքէն, ու կուրծքիս սեղմած՝ այնպէս միշտ հանդէ՛ի: Վահէ, ինձի քար մը բեր Անիէն:

Ծնողներու եւ աշակերտներու փափաքին վրայ առանձին հատորներով հրատարակութեան կը տրուին այն ազգային հոգիով եւ բարոյական խորքով պատմութեանը, որոնք երեւցան «Միտրաբեան Ընտանիք»ի եւ այլ պարբերականներու մէջ: Վստահ եմք թէ մեր մանուկ սերունդին պիտի ներշնչեն կրօնասիրութիւն եւ ազգասիրութիւն, որոնք հեղինակին հաւար լաւագոյն վարձատրութիւնը պիտի ըլլան:

— Պապի, պատասխանեց Վահէն, հոս ալ մեր երկիրն է, հոս ալ մեր քաջերու եւ սուրբերու արիւնով ներկուած է, ինչո՞ւ այդ մաշած քարերէն կ'ուզես:

— Չէ, զաւակս, ան ուրիշ քար է, անոր վրայ խաչ եւ աղօթք կայ: Վահէ, ինծի քար մը բեր Անիէն:

Ծերունին այնքան յուզումով եւ սրտով ըսաւ, որ Վահէն սկսաւ լալ, սիրտը ելաւ Ախուրեանի պէս, տըլաւ հոգիին ափերուն եւ յորդեցաւ արցունքներով:

— Պապի, Անին հիմա սահմանէն անդին է, մշուշի մէջ հազիւ կը տեսնուին իր պարիսպները, հոն Թուրքը կայ: Պապի, Անին մերը չէ:

Ծերունին լայն լայն բացաւ իր աչքերը:

— Չէ, Վահէ, չէ, Անին միշտ մերն է, անոր համար սահման չկայ, Թուրք չկայ, օտար չկայ. Վահէ, ինծի քար մը բեր Անիէն, գրկեմ ու միշտ երջանիկ հանգչիմ:

Ծերունիին աչքերէն տաք արցունքներ իջան, այնքան բարի արցունքներ, ինչպէս Ծաղկեճորի մէջ բուսնող յասմիկներու կոկոնները:

Վահէն խռոված ու տատամսոտ էր, նա յիշեց այն հազար ու մէկ պատմութիւնները որ ներսէս պապը իրեն պատմած էր Անիի մասին, գիտէր անոր Թազաւորներուն ու քաջերուն անունները, կը ճանչնար Հովիւի եկեղեցին, մայր եկեղեցին, Թազաւորական պալատը եւ միւս աւերակները՝ որոնց մէջ իր պապիկը մանկութեան ատեն խաղացեր էր, երեսը խաչակնքելով համբուրեր էր խաչքարերը, Թազաւորներու գերեզմանները: Վահէն լաւ կը ճանչնար այդ հին ու փառաւոր մայրաքաղաքը, եւ շատ անգամ փափաքած էր որ Անին ըլլար մեր մայրաքաղաքը:

— Իրաւունք ունի պապին, Անին ուրիշ բան է, ըսաւ ինքնիրեն. ապա ոտքի կանգնեցաւ, ճակատը բաց, շեշտակի նայելով ներսէս պապի աչքերուն, գրեթէ խիստ զինուորականի մը պէս որ զօրավարին առջեւ բարեւի կը կանգնի, ըսաւ:

— Պապի, կ'երգնում քու անունովդ եւ մեր տան պատիւով, կ'երգնում մեր լեռներու եւ Հայրերուն սուրբ ներկայութեան, որ ես քեզի քար մը պիտի բերեմ Անիէն:

Ծերունիին աչքերը այնքան պայծառացան՝ որ կարծես ծիրանի Արարատի դազաթն ըլլար, կարծես Անին իր գիրկն եկած ըլլար:

— Մօտեցիր զաւակս, մօտեցիր որպէսզի հերոս ճակատդ համբուրեմ. Կտրիմ որդիս՝ գօտիմ մէջքիս, եւ ուժգին սեղմեց իր դողդողացող ձեռքերով այդ Թարմ ու նորաբաց վարդը իր կուրծքին վրայ:

— Պապի, ըսաւ Վահէ, դու քաջ եւ առողջ պիտի մնաս՝ մինչեւ դառնամ քարը սրտիս:

— Այո՛, ես քեզի կը սպասեմ, որդիս:

Վահէն դուրս ելաւ ներսէս պապի սենեակէն եւ դնաց իր ընկերներուն մօտ: Անոնք երեք մտերիմներ էին Վարդաշէն գիւղին մէջ, որ Ախուրեանի ափին կը գտնուէր, իր ոտքերը գրեթէ անոր ալիքներուն խառնած:

— Վահէ, քեզ խռոված կը տեսնենք. ի՞նչ ունիս, հիւսնդ ես, ըսաւ Սիսակ:

— Ո՛չ, հիւսնդ չեմ, պապիկս հիւսնդ է, գրեթէ մեռնելու մօտ:

— Ներսէս պապի՞ն, ըսաւ Գեղամ. երթանք այցելենք, Սիսակ, ան մեր ալ պապիկն է:

— Ոչ, Ներսէս պապին ուրիշ բան կ'ուզէ, այցելելը քիչ հաճոյք պիտի պատճառէ անոր:

— Ի՞նչ կ'ուզէ, հարցուց Գեղամ, մենք պատրաստ ենք մեր պապիկին համար ամէն բան ընել:

— Դժուար եւ վտանգաւոր գործ, պատասխանեց Վահէ, մտածութեան մէջ ինկած:

— Եթէ Արարատի գագաթէն ջուր ալ ուզէ, կը բերենք, ըսաւ Սիսակ:

— Ըսէ՛, Վահէ, մենք պատրաստ ենք անոր փափաքը սիրով կատարելու, պնդեց Գեղամ:

— Ներսէս պապիկս կ'ուզէ որ Անիէն քար մը բերենք եւ սրտին վրայ դնենք, որպէսզի գերեզմանին մէջ հանգիստ հանգչի:

— Սիսակ, ի՞նչ կ'ըսես, հարցուց Գեղամ:

— Ահաւասիկ, Անին մեր դիմացն է, հազիւ 12 քիլոմետր հեռու:

— Բայց այս գետը սահման է, երկաթէ ցանց կայ, զինուորները գիշեր ցորեկ կը պաշտպանեն սահմանը, պատասխանեց Գեղամ:

— Պէտք է լաւ խորհինք եւ միջոցներ գտնենք սահմանն անցնելու համար, պատասխանեց Գեղամ:

Երեքը միասին գացին Սիսակի տունը, որ գետի ափին էր, եւ գեղջկական պատշգամ մը կը ցուանար ջուրերու մէջ: Հոն նստեցան լուրջ խորհուրդի:

— Հարցը դժուար է եւ պատուաբեր, սկսաւ Վահէ, դիւղին մէջ վաղը պիտի խօսին մեր քաջութեան վրայ. այդ գետը ոչ ոք կրցած է անցնիլ. այս սահմանը ուրիշ է. անդին մեր դարաւոր թշնամին կայ:

— Երթանք յայտնենք փափաքնիս մեր պահականոցի հրամանատարին, ինքը դիտէ միջոցներ, ու թերեւս

թոյլ տայ այն կողմն անցնիլ, խորհուրդ տուաւ Գեղամ:

— Մեզ երեքս ալ շիտակ բանտ կը նետէ, պատասխանեց Վահէ, զինուորականը՝ սրտի գործերէ քիչ կը հասկնայ:

— Այս գործը պէտք է զաղտնի ընենք. ես կը խորհիմ թէ այս գիշեր իսկ, ըսաւ Սիսակ:

— Այո՛, գիշերը ամէնէն յարմար ժամանակն է, արդէն լուսին ալ կայ, ըսաւ Գեղամ:

— Լողալ գիտենք, այնպէս չէ՞:

— Ձուկի պէս, պատասխանեցին ընկերները:

— Կարծեմ պէտք պիտի ըլլայ Անիի մէջ օր մը անցընել, եւ գիշերով երթալ ու գիշերով դառնալ, ըսաւ Վահէ: Ցորեկ ատեն ճամբորդելը վտանգաւոր է, թուրք պահակները կրնան տեսնել ու մեզ բռնել:

— Քիչ մը ուտելիք ալ առնենք, այնպէս չէ՞, ըսաւ Գեղամ: Հոն խմելու ջուր կա՞յ. օգը տաք է, շատ պիտի ծարաւնանք:

— Մոցերնիս քիչ մը պանիր հաց դնենք՝ կը բաւէ, պատասխանեց Վահէ: Այս գիշեր ուրեմն Սիսակի առնէն կամացուկ մը գետը իջնենք. ցանցը մինչեւ ջուրին մէջ կ'իջնէ, պէտք է խոր տեղ մը գտնենք ու տակէն անցնինք:

— Ես գիտեմ խոր տեղը, անգամ մը անդին անցած ու դարձած եմ. ջուրը հոն պտոյտ կու տայ, բաւական խոր է, մենք կը սուզուինք՝ եւ վայրկեանէ մը անդին կ'ըլլանք: Ուշադրութիւն, ցանցերուն չդպչիլ, շատ անգամ ելեկտրական հոսանք կ'անցընեն:

— Երբ անցնինք՝ փորի վրայ սողալով երթանք.

դիմացը թուրքի մը կալը կայ, չմտենանք, պզտիկ շշուկ մը կրնայ արթնցնել թուրքերը:

— Ճիշտ է, ըսաւ Սիսակ, խոշոր շուն մըն ալ ունի. լաւ է իսկոյն հեռանալ՝ քանի գետին շառաչը ամէն աղմուկ կը ծածկէ:

Երեկոյեան մօտ անոնք իրենց փոքրիկ պատրաստութիւնները տեսան, լաւ մը քննեցին անցնելիք տեղը, մինչ ամառնային արեւը ոսկեզօծելով վարդերու եւ այգիներու այսերը, կամաց կամաց կը հեռանար Արարատի ետեւը, գիւղը կ'իյնար կապոյտ մթութեան մէջ, ապա գորշ մթութիւն, եւ ահա խաւարը պատեց ամէն բան: Լուսինը դեռ չէր ելած հորիզոնէն, մէկ երկու ժամ պէտք էր: Գիւղացիներէն շատերը յարդի գէզերու վրայ կը պտտկէին, տան մէջ շատ սաք էր: Երեք ընկերները սակա միասին մէկուէն կամ միւսին կալը կը պտտկէին, որով իրենց բացակայութիւնը զգալի չէր տնեցիներուն:

Կէս գիշերին՝ առաջինը Սիսակ եղաւ որ ջուրը նետուեցաւ եւ ալիքները ճեղքելով, խոր տեղէն անցաւ անդին. անոր հետեւեցաւ Վահէ եւ սուս Գեղամ: Ձէին խորհած թէ իրենց զգեստները եւ ծոցի հացն ու պանիրը պիտի թրջէին:

— Հող չէ, ըսաւ Գեղամ, թրջած հացը աւելի համով կ'ըլլայ, իսկ զգեստները՝ այս տաքին շուտով կը չորնան:

Սողալով անցան թուրքին կալը, եւ մտնելով նեղ ճամբայ մը, որ դէպի հարաւ-արեւմուտք կը տանի, սկսան լուռ քայլել: Անին այդ մութին չէր տեսնուեր, բայց անոնք ուղղութիւնը արդէն առեր քին: Ժամ մը յետոյ հորիզոնին վրայ մշուշոտ աւերակներ սկսան տեսնուիլ:

— Անի՛ն, Անի՛ն, բացականչեց Վահէ ուրախութեամբ:

— Լուռ կեցիր, սաստեց Սիսակ, ամէն շշուկ մեզի թշնամի է:

— Ես կարծեմ կէս ժամէն կը հասնինք, ըսաւ Գեղամ, ծոցի հացէն կտոր մը ուտելով:

— Եթէ երկու ժամէն հասնինք՝ լաւ, պատասխանեց Սիսակ, քեզի այդպէս մօտ կը տեսնուի, գիշերը կը խարէ:

Քիչ վերջ անոնք ելան դաշտային լայն ճամբայ մը:

— Ես կարծեմ լաւ չէ որ այս ճամբէն երթանք, ըսաւ Վահէ, կրնան ինքնաշարժներ կամ ճամբորդներ հանդիպիլ: Պային կ'ըսէր թէ Ախուրեանը կը տանի Անի, ինչո՞ւ գետին չհետեւինք:

Եւ իսկապէս լաւ ըրին, քիչ վերջ գինուորական ինքնաշարժ մը լոյսերը բացած անցաւ անոնց մօտէն:

— Տեսա՞ք, ըսաւ Վահէ, բախտը մեզ ազատեց:

— Բա՞խտը... սաւոր խելքը ըսէ:

— Բայց գետին երկայնքին ալ վտանգաւոր է, հիմա բոլոր գազանները ջուր խմելու կ'երթան. եթէ արջի կամ գայլի հանդիպինք, վրայ բերաւ Գեղամ:

— Գազանները ամառ ժամանակ կամ Արարատի բարձունքները կ'ելլեն եւ կամ Տայքի անտառները կ'երթան, վախ չկայ:

Գետի երկայնքին հետեւելով՝ անոնք շարունակեցին իրենց ճամբան. երբեմն շուներու հաջոցներ կը լուռէին, երբեմն լուռութիւնը սաստիկ կը ճնշէր բնութեան վրայ:

Լուսինը Արարատի վրայ կը խաղար, երբ արշալոյսի առաջին ճառագայթներու հետ անոնք հասան Անիի պարիսպներուն տակ:



Աւերակներ ազդիմ, աւերակներ ամդիմ...

— Պապիկը իսկապէս չէ սխալած, Ախուրեանը Անիի գետն է, ըսաւ Սիսակ:

— Պապիկս այս տեղերը մատի վրայ գիտէ, ըսաւ հպարտութեամբ Վահէ:

Կարսի դռնէն ներս մտան, աւերակներ ասդին, աւերակներ անդին եւ մէջտեղը մայր եկեղեցին՝ մինակը կանգուն, որուն խորան եւ խունկ կը պակսէր: Վահէ յուզումէն չկրցաւ ինքզինքը զսպել, ծնրադրեց եւ հողը համբուրեց:

— Լաւ կ'ըլլայ որ աւերակի մը մէջ հանդիպեմք, մինչեւ լաւ մը լուսնայ, եւ յետոյ զննենք մեր զիրքերը, խորհուրդ տուաւ Գեղամ, պատառ մը հաց խածնելով:

— Կրնայ ըլլալ որ հովիւներ ալ գտնուին այստեղ, ըսաւ Վահէ, այս անհաւատները ախոռ ըրած են մեր սրբավայրերը:

Երեքը միասին լայն կամարի մը տակ մտան եւ սրբատաշ քարերու վրայ նստեցան: Քիչ վերջ շուներու հաջոց լսուեցաւ ու ետեւէն՝ ԴՍՅ, ՊՍՅ, քրտական երգի մը ձայնը:

— Ձայնդ կոկորդզ մնայ, ըսաւ Գեղամ:

Ոչխարներու ընդարձակ հօտ մը կամաց կամաց սկսաւ հարաւային դռնէն դուրս ելլել. տղաքը աւելի ապահով զգացին, ալ մարդ չկար այդ հսկայ պարսպութեան մէջ: Անոնք մէկիկ մէկիկ սկսան զննել աւերակները, ամէն քար սրբութիւն էր իրենց համար:

— Վահէ՛, տես սա տեղ ինչ գրուած է, ըսաւ Գեղամ, երկար քար մը ցոյց տալով:

Երեքը միասին ծոեցան եւ հեզելով կարդացին Աշտու Ոգոքմած:

— Կը յիշե՞ք պատմութենէն այդ ազնիւ ու բարի թաղաւորը, այնպէս չէ՞, հարցուց Վահէ:

— Փնտռենք, դեռ շատեր պիտի գտնենք, ըսաւ Սիսակ, հոս ամէն ինչ Հայութիւն է:

— Ինչո՞ւ սա Թուրքերուն ձեռքը մնացեր է, մեզք չէ՞ այս փառաւոր անունին եւ քաղաքին, ըսաւ Գեղամ:

— Օր կու գայ որ մերը պիտի ըլլայ, վրայ բերաւ Վահէ, ժամանակը մեզի համար կ'աշխատի եւ մեր դաշնակիցն է:

— Աստուած ձայնդ լսէ, ըսին երկուքը:

Անոնք սրտազին հետաքրքրութեամբ դիտեցին ամէն կողմ: Արեւը առանձին փայլ ժը կու տար այդ հստանդ քարերուն եւ աւերակներուն, շուքերը կը դառնային անոնց չորս բոլորը՝ Թաւիչէ ժանեակներ ձեւացնելով:

— Վահէ', Վահէ', գոչեց յանկարծ Սիսակ, հոս անուններ կան:

— Այո', ճիշտ է, անուններ կան, պատասխանեց Վահէ: Մաքրեցին բորբոսած քարերը եւ կարդացին. Սմբատ Տիեզերակալ. միւսին վրայ՝ Գագիկ առաջին:

Փնտռենք Աշոտ Երկաթը, ես այդ Թազաւորը շատ կը սիրեմ. Ի՞նչպէս լաւ կը խփէր իր Թշնամիներուն, հոգին սիրեմ, ըսաւ Վահէ:

Իսկապէս քիչ անդին գտան մաշած քար մը, խոտերուն մէջ Թաղուած: Մաքրեցին վրան եւ Ա-ը դուրս ելաւ:

— Հոս Շ գիրը, Ո-ն ալ կայ, ուրեմն Աշոտ-ն է, պէտք է Երկաթը գտնենք: Խանդավառուած փնտռենք Գեղամ: Գտան Երկաթ բառն ալ եւ երեքը միասին համբուրեցին այդ փառաւոր անունը, որ դարերն ու քարերը չեն կրնար ծածկել, ոչ ալ Թշնամի դրօշակներ:

— Ի՞նչ քար տանինք պապիկին, ըսաւ Սիսակ:



Երեքը միասին ծոեցան եւ հեգելով կարգացին ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ

— Է՛հ, քար մը կը տանինք, ինչ պիտի ըլլայ, բո-
լորն ալ մէկ են, պատասխանեց Գեղամ:

— Ո՛չ, պապիկս բարեպաշտ քրիստոնեայ է, իրեն
հաճելի պիտի ըլլայ Մայր եկեղեցիին աւերակներէն
քար մը եւ անպայման վրան խաչ դծուած, վրայ բե-
րաւ Վահէ:

— Երթանք, Սիսակ, հիմա խաչքար փնտոնեք: Եթէ
Մայր եկեղեցիին քով չգտնենք, Ս. Փրկիչ եկեղեցիին
քով կ'երթանք. եթէ հոն ալ չըլլայ՝ կը դիմենք Հովի-
ւի եկեղեցիին, այնպէս չէ՞, Վահէ:

Մայր եկեղեցին ճիշտ քաղաքին կեդրոնն էր, ամէ-
նէն բարձր շէնքը եւ գրեթէ անվնաս մնացածը: Երբ
մօտեցան՝ երեսնին խաչակնքեցին եւ գլխարկնին հա-
նելով ներս մտան: Գմբէթը եւ պատերը թէպէտ քիչ
մը խանգարուած՝ իրենց տեղերն էին. պատուհաննե-
րը բոլորովին բաց եւ յատակին թափած էին քար եւ
հող:

— Կեցէք մէյ մը հորիւրդ խորիմ մը երգեմ, ըսաւ
Գեղամ, սիրտս տեղը չի կենար. . . եւ զիլ ձայնով երգեց
«Սորհուրդ խորին»ը:

Անոնք չէին կշտանար եկեղեցին դիտելէն, զարդա-
գեղ կամարները, նազելի սիւները եւ խոյի գլխով խո-
յակները զիրենք յափշտակած էին:

— Տղաք, կանչեց Վահէ, խաչքար մը փնտոնեցէք,
ասկից աւելի գեղեցիկ յիշատակ ուրիշ տեղէ չենք կըր-
նար գտնել:

— Հոս հատ մը կայ, ըսաւ Սիսակ, բայց ասիկա
ո՞վ կրնայ շարկել տանիլ, շատ մեծ է:

— Սա հողակոյտին մէջ թերեւս ըլլայ, ըսաւ Գե-
ղամ, եւ սկսաւ հողը բանալ ձեռքերով:

— Տղաք, գտայ, գտայ, կանչեց ուրախութեամբ

Վահէ. տեսէք ի՛նչ սիրուն է, խաչը կարծէք երկինք
պիտի թռչի, ծանր ալ չէ, ամէնէն յարմարն է:

Գեղամ քրտինքը սրբեց եւ շրթունքներուն տանե-
լով քնքուութեամբ համբուրեց:

— Ով գիտէ ո՛ր ցաւազին սիրտը ուխտի եկած եւ
նուիրած է այս սիրուն խաչքարը:

— Իսկապէս սիրուն է, ըսաւ Սիսակ, ինքն ալ համ-
բուրելով:

— Այդպէս չեն համբուրեր, ըսաւ Վահէ, այլ սա-
պէս, եւ խաչքարը տարաւ իր սրտին, տարաւ աչքե-
րուն, տարաւ շրթներուն՝ անոյշ տրցունքով ողողե-
լով դայն:

Օրը կը տարածամէր:

— Արդեօք այս կողմերը աղբիւր մը չկա՞յ, ըսաւ
Գեղամ, շատ ծարաւ եմ, ծոցս դեռ քիչ մը հաց կայ,
ան ալ ուտեմ:

Եկեղեցիէն դուրս ելան, թէպէտ չէին ուզեր բաժ-
նուիլ:

Աւելի հեռուն կանաչորակ տեղ մը կար, յայտնի էր
թէ հոն պէտք էր ջուր գտնուիլ: Գեղամ առանց բան
մը ըսելու քայլերը առաւ դէպի կանաչը, իսկապէս
գուլալ ջուր մը կը վազէր գուռի մէջ, ուսկից հօտերը
կը խմէին:

— Չոռ խմէք, ըսաւ տղան, եւ բերսնը տարաւ ա-
կին: Միւսներն ալ խմեցին ու լուսացուեցան. ջուրը դո-
վարար էր եւ աւելի անոյշ, որովհետեւ հայրենի ջրիկ էր:

— Մե՛ղք, եթէ աման մը ունենայի՛ պապիկին ալ
կը տանէի, թերեւս խմելով առողջանար, ըսաւ Վահէ,
եւ ջուրով երեսը խաչ հանեց, անգամ մ'ալ խմեց՝ աս
ալ պապիկին տեղը:

Հեռուէն նորէն լսուեցաւ. 'իւր, դիւր քիւրտին երգը:

— Գրողը տանի թեզ, մրմուսաց Գեղամ :

— Երթանք սողաք, ըսաւ Վահէ, ժամանակը կը մօտենայ, վերջալոյսը մարելու մօտ է :

Ճամբայ ելան ջերելով Ախուրեանը, որ կը համբուրէր Անիի փէշերը, եւ երբ Կարսի դուռէն անցան, երեքն ալ ետ դարձան նայեցան պարիսպներուն, նայեցան կամարէն ներս եւ ձեռքով համբոյր զրկեցին մեռած եւ սիրելի քաղաքին, որ վշտահար թագուհիի պէս կը սպասէր, կարծես թէ սուրբ մասունք կը պահէր իր ծոցին մէջ : Բռնեցին դարձեալ զետին ափը եւ մէկ զծի վրայ սկսան լուռ յառաջանալ : Լուսնակը տակաւին չէր ելած եւ աստղերը առատ էին երկնքին մէջ :

— Գիտէ՞ք թէ ինչ է այդ կաթնորակ զիծը, հարցուց Վահէ :

— Այո՛, զիտեմ, շուտով պատասխանեց Գեղամ, կին մը ժամանակին երկնքէն կաթ կը տանի եղեր իր զաւակներուն, ճամբան թափեր ու սառեր է :

— Ո՛չ, այդպէս չէ, ըսաւ Սիսակ, ասիկա Յարդգող կը կոչուի, ժամանակին մեր Վահագն քաջ թագաւորը կ'երթայ եւ Ասորեստանի բոլոր յարդերը կը զողնայ. երկնքէն թռած ատեն ճամբան կը թափին թեւին տակէն ու հոն կը մնան :

— Ատ երկունքն ալ սուտ պատմութիւններ են, վրայ բերաւ Վահէ. ասոնք միլիոնաւոր աստղեր են, այնքան իրարու մօտ՝ որ երկնքին վրայ ճերմակ ճամբայ կը տեսնուի :

Այդ պահին Գեղամ զոչեց յանկարծ .

— Կեցէք, բան մը կը շարժի, աչքեր կը փայլին : Երեքն ալ տղայ էին, չէ՞ . սրտաթունդ կեցան : Վահէն քար մը նետեց, բայց ան տեղէն չշարժեցաւ :

— Ի՞նչ կրնայ ըլլալ, հարցուց Գեղամ թիչ մը վախցած : Եթէ դայլ է՝ վա՛յ մեզի :

— Ոչ, դայլ չէ, ըսաւ Սիսակ, ապա թէ ոչ կը շարժէր եւ կամ մեր վրան կը յարձակէր :

Քիչ մ'ալ մօտեցան, քար նետեցին, հը՛շտ պոռացին, բայց նա չէր շարժեր :

— Ուրիշ բան պիտի ըլլայ, ըսաւ Վահէ եւ քաջութեամբ առաջ գնաց. տեսաւ որ ապակիի կտոր մ'էր որ դիմացի լուսնէն ցոլք կու տար : Տղաք, մահուան վրտանդն անցաւ, զոչեց եւ ցոյց տուաւ ապակին :

Այդ զիշեր գետի միւս ափէն որ Հայաստան է, լուսարձակով կը զննէին սահմանը, բայց երեք ընկերները գիտէին այդ սովորութիւնը եւ թուփերու ետեւէն կը քայլէին, գետէն թիչ մը հեռու : Գետը՝ բարձրացող լուսնին տակ արծաթի պէս կը շողար. ալիքները անոյշ երգ մը յօրինած էին թաւիչէ լուսթեան մէջ :

Յանկարծ Վահէն ցաւազին ա՛րս մը քաշեց :

Ի՞նչ կայ, Վահէ, հարցուցին ընկերները, ոտքդ փո՛ւշ մտաւ :

— Ոչինչ, գէշ զգացում մը եկաւ վրաս, թէ պապիկը կը մեռեր է :

— Ո՛հ, կնիկի բան է, ըսաւ Գեղամ, քալեցէք :

— Չարմանալի բան է, ըսաւ Վահէ, երբ Անիէն ելանք՝ այս քարը շատ թեթեւ էր, իսկ հիմա երթալով կը ծանրանայ : Սիսակ, ի՞նչ կ'ըսես, արդեօք հրա՞ջք է :

— Ոչ, դուն յոգներ ես, թիչ մը ինձի տուր :

— Չեմ տար, ուխտ ըրած եմ մինաւիս տանիլ :

Տակաւին թերեւս չորս-հինգ մղոն. կար Վարդաշէն հասնելու համար, եւ երեքը աւելի դանդաղ կը քայլէին. բարեբախտաբար լուսինը ցոյց կու տար թուփերու մէջ անասուններու շինած արահետները :

— Չէ՞ք կարծեր որ առաւօտը մօտ ըլլայ, ըսաւ Գեղամ, նայեցէք, Հայկ համաստեղութիւնը կը տեսնուի:

— Դուն ե՞րբ աստղաբաշխ եղեր ես, հարցուց Վահէ:

— Աստղաբաշխները ի՞նչ են. անոնք ալ մեզի նման մարդիկ են. իմ հայրիկ սորվեցուցած է:

— Եթէ այդպէս է, սա զիմացի մեծ աստղը ի՞նչ է, հարցուց Սիսակ:

— Ո՞րը:

— Սա զիմացը, նայէ ի՛նչպէս կը փայլի:

— Լա՛ւ. նայէ, ասիկա ա՞՞ստղ է... պահականոցի ձողին լոյսն է:

Ախուրեանի միւս ափին վրայ հայկական գիւղերը ելեկտրական լոյսերով զարդարուած էին, կարծես սաստղեր ըլլային մեր հողին վրայ, մինչ թրքական կողմը հնադարեան մթութիւն կը տիրէր: Մօտեցան թրքական պահականոցին, ուսկից արօտ լոյս մը կը ծորէր:

— Լաւ է որ աւելի մօտենանք գետին, ըսաւ Գեղամ, այս մարդիկը կրնան որսկան շուներ ունենալ, որոնք իրենցմէ վար չեն մնար:

Երբ գետը դարձուածք մ'ըրաւ. բլրան մը կողին, Վարդաշէնը շատ մօտ տեսնուեցաւ: Երեք տղաք ուրախութեան ճիչ արձակեցին ու երեք ցուցամասոններ երկարեցան դէպի գիւղը:

— Հո՛ն է, հո՛ն է, ըսին իրարու, եւ կարծես ոյժ առին աւելի արագ քայլու:

— Փառք քեզ Աստուած, անվտանգ մօտեցանք, ըսաւ Սիսակ:

— Պապի, քարը բերինք, ճչաց Վահէ քիչ մը հեւարով, եւ դէմքը ուրախութենէն ճառագայթեց:

— Թուրքին կալը հոս վարն է, քիչ մը հեռուէն դառնանք, փափսաց Սիսակ:

— Այդ յիմարն ալ ճիշտ մեր գիւղին զիմացը կ'ապրի: Օր մը կը տեսնէ թէ այդ տունը որո՞ւն կ'ըլլայ, դռնց Վահէ: Երբ մենք տկար էինք՝ մեր ձեռքէն յափըշտակեց, բայց հիմա բանակ ունինք եւ ի՛նչ զինուորներ:

— Վահէ, ձայնդ քաշէ, սաստեց Սիսակ որ ամէնէն զգոյշն էր. երբ միւս ափն անցնինք՝ ուզածիդ չափ պոռայ եւ հայճոյէ:

Մօտեցան գիւղին. գետը յորդալով կը զարնուէր քարերուն ու կը հոսէր կատաղօրէն դէպի հարաւ: Մթնշաղ էր եւ հեռաւոր հորիզոնները լոյս ինկած էր: Զգուշութեամբ անցան թուրք գիւղացիին տան մօտէն եւ իջան գետափը:

— Նախ ես կը մտնեմ ջուրը, ըսաւ Սիսակ, ես լաւ գիտեմ անցնելիք տեղը: Զմոռնաք որ ցանց կայ, պէտք է մինչեւ յատակը իջնել:

— Եթէ չուան մը ունենայինք՝ իրարու կապուած կ'անցնէինք, ըսաւ Գեղամ: Աչքս չի կտրեր, վախ մը եկաւ վրաս: Տեսէք ինչպէս փրփրալով կ'երթայ, կարծես այսօր աւելի կատաղի է:

— Աչքիդ այդպէս կ'երեւայ. հիմա ամառ է, շատ պակսեր է ջուրը, եթէ դարնան սկիզբը տեսնես՝ սարսափ կու գայ վրադ. շատ անգամ մինչեւ մեր պատըշղամը կը բարձրանայ, պատասխանեց Սիսակ: Ուրեմն քաջութիւն եւ նետուինք: Վահէ, լաւ պիտի ըլլայ որ խաչքարը ինձի տաս, ես աւելի վարժ կը լողամ:

— Ոչ, ծոցէս չեմ հաներ, ասիկա ինձի համար ներսէս պապիկիս սիրտն է: Դու գիտես թէ ես ալ մեծ ճուղի պէս կը լողամ:

— Զանա՛ գլուխդ միշտ բարձր բռնել, Վահէ, ըսաւ Սիսակ, ձախովդ քարը փորիդ սեղմէ, իսկ աջդ թող ազատ ըլլայ լողալու համար:

— Ես կարծեմ թէ լաւ է որ քարը կռնակին վրայ կապենք. ես մէջքի գօտիս կու տամ:

— Ո՛չ, կրնայ վար իյնալ, յետոյ ի՛նչպէս պիտի կարենանք գտնել այս գետին մէջ, պատասխանեց Վահէ: Ասիկա խելք չէ:

— Կարծեմ թէ ամէնէն լաւն է իմ լօղիկիս մէջ դընել, եւ մեր գօտիներով ամրացնել կուրծքիդ վրայ. ձախովդ թեթեւ մը կը բռնես, եւ եթէ վտանգ ըլլայ՝ կրնաս երկու բազուկներով լողալ. բայց ուշադիր պիտի ըլլաս խաչքարին:

— Ասոր խելքս կը պառկի, ըսաւ Վահէ:

Եւ ամրացուցին քարը Վահէին կուրծքին վրայ:

— Տղաք, անցնինք. լոյսը սկսաւ անձրեւի պէս գալ, ըսաւ Սիսակ:

Սիսակ կիսամերկ մտաւ ջուրը, քիչ մը տեղ ծանծաղ էր. ապա հասաւ ցանցերուն ուր գետը փորած էր խոր աւազան մը. սողոսկելով կորսուեցաւ ջուրին մէջ. միայն գլուխը տեսնուեցաւ:

— Անցա՛ւ, կանչեցին երկու ընկերները:

— Գեղամ, դուն մտիր, ես ետեւէդ կու գամ, եթէ վախնսս՝ ես կամ Սիսակը քեզի օգնութեան կու գանք: Գեղամ քիչ մը վախով մտաւ ջուրը. ուժեղ ալիք մը եկաւ ու նա ետ քաշուեցաւ:

— Մի՛ վախեր, մտիր, պոռաց Վահէ, երէկ այնքան քաջութիւն կը ծախէիր:

Տղան սիրտ առաւ եւ մէկ ոստումով նետուեցաւ այն տեղ՝ ուսկից անցած էր Սիսակ: Կարծես թէ գետը կը ճանչնար այդ տատամսոտ պատանին, ալիքները ա-

ւելի բռն տեսնուեցան. Գեղամ գերբնական ուժով սկսաւ պայքարիլ, գլուխը միորճուեցաւ աւազանին մէջ: Վահէն շունչ չէր կրնար առնել, կը հետեւէր անոր ընթացքին: Սեւ բան մը տեսնուեցաւ, Գեղամի գլուխն էր. ցանցը անցած է, ըսաւ Վահէ, ալ վախ չկայ, անդին ցած է ջուրը:

Վահէ թէպէտ Սիսակին պէս քաջ լողացող չէր, սակայն հոգեկան աւելի կորով ունէր, միշտ անվախ եղած էր: Անխուով մտաւ ջուրը, Խաչքարը կարծես աւելի ծանրացած էր իր կուրծքին վրայ: Վարդաչէն գիւղին մէջ արդէն գիւղացիներ կը տեսնուէին: Սիսակի սիրտը կտոր կտոր կ'ըլլար որ չըլլայ թէ հայ պահակներ խուզարկութեան ելլեն եւ բռնուին ամէնէն կարեւոր ժամանակին: Գետի միւս ափէն ձեռքերով նշան ըրաւ Վահէին որ շուտ ընէ: Այդ պահուն Սիսակի ոտքերը սկսաւ լիզել սեւ գամբու մը, որ չէր տեսնուած մութին մէջ. Վահէին շունն էր. կարծես հոս առած էր եւ իր փոքրիկ տիրոջը կը սպասէր: Վահէ սկսաւ ծանրօրէն լողալ աւազանին մէջ, երբեմն կը տեսնուէր ու երբեմն կը կորսուէր, իր կռիւը մեծ էր ալիքներուն հետ: Արդէն գրեթէ քառորդ ժամ անցեր էր եւ տալիսին դիմացի ափը չէր հասած:

— Վահէ, կանչեց Սիսակ:

— Վահէ՛, Վահէ՛, կանչեցին միասին:

Աւելի վարով տեսան իր գլուխը:

— Անիծեալ գետը քշած է զինքը, ըսաւ Սիսակ: Վահէ գլուխը դուրս ըրաւ ջուրէն, բայց զարձակ գաղտնի ոյժ մը վարէն զինքը ներս քաշեց: Ոտքը աւազին եկաւ եւ սահելով ջուրերուն մէջ գլորեցաւ: Շունչը կտրած էր, կարծես մահուան հետ կը պայքարէր: Քարը ձեռքերէն վար ինկաւ, բայց նա իսկոյն

գտաւ եւ աւելի ուժով սեղմեց իր սրտին: Յանկարծ ուժով ալիք մը զարկաւ իր դէմքին եւ բերանը ջուրով լեցունեցաւ. վրան գրեթէ մարելիք եկաւ. ա՛խ, եթէ քարը չըլլար՝ նա շուտով եւ դիւրութեամբ կ'անցնէր դետը: Հաւաքեց վերջին ուժերը, յաղթելու համար ալիքներուն եւ մահուան: Բայց այդ փոսը աւազուտ եղբրք մ'ունէր, ուսկից իր ոտքերը չէր կրնար վեր դնել եւ ունայն ճիղերով վար կը սահէր: Յանկարծ թուլցան ձեռքերը, ուշքը կորսնցուց եւ պղպղակներ ելան ջուրին երեսը: Քարը սեղմած իր սրտին՝ նա մնաց:

— Միսակ, ձեռքերը չեն շարժիր, ձիւնը գլխուս, խեղդուած է անպայման:

Փամբուր իրենց հետ կը հետեւէր տեսարանին, ան կը սպասէր Վահէին, եւ Վահէն չէր գար. իր սուր բնազդով զգաց թէ փոքրիկ տէրը վտանգի մէջ է: Յանկարծ նետուեցաւ ջուրը եւ ակնթարթի մը մէջ հասաւ Վահէին, որ խաղալիկ եղած էր կատաղի ալիքներուն:


Անոր հետեւեցաւ Միսակ, բայց շունը արդէն ուժով խածած տղուն գգեստէն, դուրս կը քաշէր անշունչ մարմինը: Գեղամ ալ քաջութիւն առաւ եւ նետուեցաւ ջուրը: Շուտով տղան դետափ հանեցին:

— Մեռած է, խեղճ Վահէ, ըսաւ Գեղամ:

— Ո՛չ, պէտք է արուեստական շունչ տանք: Ա՛ն սա Պաշքարը, բա՛ց լաթերը:

Միսակ սկսաւ Վահէին թեւերը շարժել, գլխի վար չըջեց եւ ահա բերանէն դուրս սկսաւ հոսիլ կլլած ջուրը:

— Գուն թեւերը շարժէ, Գեղամ, ես ստամոքսը եւ փորը մարձեմ: Պոռվըր աչքերնուն մէջ եւ ցաւը սրտերնուն վրայ՝ երկար աշխատեցան:



Յանկարծ նետուեցաւ ջուրը և ակնթարթի մը մէջ հասաւ Վահէին...

— Կարծես թէ սիրտը կը զարնէ, ըսաւ Գեղամ ա-
կանջ դնելով:

— Շարժէ՛ թեւերը, Վահէն պիտի ապրի:

Գամբուր Վահէին չորս կողմը կը դառնար, կը հոտ-
ուրտար եւ կը լիզէր երեսը:

— Անդին դնա՛, արգելք մի՛ ըլլար, սաստեց Սի-
սակ շունին:

— Ա՛հ... լսուեցաւ երկար ու խոր:

— Վահէ... կանչեց Սիսակ:

Վահէ բացաւ աչքերը, սրոնք արշալոյսին պէս կար-
մըրած էին:

— Ես ո՞ւր եմ, ի՞նչ եղաւ, հարցուց նուազ ձայնով:

— Բան մը չեղաւ, դուռն լաւ ես, հոս բոլորս ալ գե-
տը անցեր ենք:

— Խաչքարը... ըսաւ մեղմ ձայնով եւ դարձեալ
դոցեց աչքերը:

— Շատ հանդիստի պէտք ունի, ըսաւ Գեղամ, լաւ
է գինքն անկողին դնել:

— Մեր տունը տանինք:

— Բայց ծանր է, ի՞նչպէս շալկենք, պատասխանեց
Գեղամ:

Վարդաշէնի դռներն ու պատուհանները արդէն
բացուած էին, երթեւեկը շատցեր էր դիւղին մէջ:

— Ի՞նչ տեսակ հայ արի ես, ըսաւ Սիսակ, չե՞ս
դիտեր թէ ինչպէս կը փոխադրեն հիւանդները: Ձեռքերդ
տարածէ եւ բռնէ միւս ձեռքդ, ուժով բռնէ: Ինքն ալ
խաչածեւ բռնեց Գեղամի ձեռքերը եւ անցընելով Վա-
հէի տակէն վերցուցին: Վահէին գլուխը Սիսակի ուսին
կռթնեցաւ: Տղան ցնցումէն դարձեալ աչքերը բացաւ
եւ կարծես աղօտ ժպիտ մը անցաւ շրթներուն վրայէն:

— Քալենք, ըսաւ Սիսակ:

— Խաչքարը:

— Անոր ժամանակը չէ, թող հոս մնայ, մեր տունը
մօտ է, կու գանք կ'առնենք:

Իրենք ալ յողմած էին, բայց դերձնական ոյժ մը
գիրենք կը զորացնէր. ծանր ու դանդաղ բարձրացան
գիւղը, որ բլրակի մը կողին վրայ էր: Սիսակի տունը
գետին վրայ կը նայէր: Շուտով հասան:

— Սիսակ, հոգուդ մատաղ, ո՞ւր էիր գաւակս,
ըսաւ մայրը: Աս ի՞նչ է, ի՞նչ եղած է:

— Մայրիկ, անկողինս պատրաստ է:

— Այո՛, երէկուրնէ պատրաստ է:

— Օղի կա՞յ տունը:

— Կայ, գաւակս:

Շուտով Վահէն պառկեցուցին անկողին, եւ Սիսակ
օղին առնելով շփեց անոր երեսը, գլուխը, կուրծքը:

— Մայրիկ, տաք թէյ մը եփէ:

Օղիին ազդեցութենէն Վահէ աւելի կազդուրուե-
ցաւ, սկսաւ կանոնաւոր շունչ առնել: Քնանալու սաս-
տիկ պէտք կը զգար:

— Թող քնանայ, քունը օրհնեալ դեղ է, ըսաւ Գե-
ղամ: Թէյը մենք կը խմենք:

Յանկարծ Վահէն աչքերը բացաւ, եւ ցնցելով գլու-
խը ըսաւ.

— Խաչքարը...:

— Իրաւունք ունի, Գեղամ, վազէ բեր:

Երբ Գեղամ դռնէն դուրս ելաւ, գամբուր թախծոտ
աչքերով ներս կը նայէր. օտարի տուն էր, չէր հա-
մարձակեր ներս մտնել եւ փոքրիկ տէրը տեսնել:

— Ողջ է, ողջ, ըսաւ Գեղամ, շոյելով հսկայ շունը:

Գամբուը զգաց թէ ուրախ բան մը կայ, պոչը շարժեց եւ սկսաւ թնձկալ:

Խաչքարը դրին Վահէի մօտ՝ բազմոցին վրայ:

— Աս ի՞նչ քար է, տղաս, հարցուց Սիսակի մայրը:

— Համբուրէ, մայրիկ, համբուրէ, օրհնած խաչքար է, Անիէն բերինք:

— Վահ... հոս քար չկա՞ր: Ի՞նչպէս սահմանը անցաք, Աստուած պահեր է: Եթէ այս տղան մեռնէ՞ր:

— Մի՛ ըսեր, մայրիկ, վրաս դող կու գայ, պատասխանեց Գեղամ:

Երեք ընկերներն ալ քնացան, շատ յոգնած էին: Երբեմն երբեմն Վահէն խոր հառաչներ կ'ընէր: Գրեթէ չորս հինգ ժամ քնացան: Նախ Վահէն արթնցաւ, դրեթէ ամէն բան անցեր էր, առաջուան գուարթ եւ կենտունակ Վահէն էր:

— Ի՞նչ կը քնանաք, ծոյլեր, կանչեց իր ընկերներուն:

— Վահէ, ի՞նչպէս ես, արթննալով հարցուց Սիսակ:

— Շատ լաւ:

— Փառք Աստուծոյ: Գեղամ, ելի՛ր, մշտեց Սիսակ: Դուն հիմա նոր ծնած պէպէք ես Վահէ, մեռած էիր եւ յարութիւն առիր:

— Ըսածնիդ կը լսէի, բայց բան մը կար կոկորդիս վրայ եւ չէի կրնար խօսիլ:

— Թողունք այդ ամէնը, լաւ չէ տխուր բաները յիշել, ըսաւ Գեղամ:

— Երթանք մեր տունը, պապիս մեզի կը սպասէ, Աստուած չընէ, յանկարծ մեռած կը գտնենք:

— Վահէ, դուն դեռ հանգչելու պէտք ունիս:

— Ոչ, ես շատ լաւ եմ, ըսաւ ու ցատկեց անկողինէն վար:

— Լաւ է որ խաչքարը ես առնեմ, Վահէ, դուն յոգնած ես, դոյնդ քիչ մը նետած է:

— Սիսակ, ձգէ որ ես տանիմ, կեանքիս գինն է:

— Չեր տան դրան առջեւ քեզի կու տամ:

— Պատուոյ խօ՞սք:

— Պատուոյ խօ՞սք:

Մեկնեցան տունէն. գամբուը դեռ դրան առջեւն էր, ուրախութեամբ ցատկեց Վահէին վրայ, թնձկաց ու կարծես լացաւ:

— Քու ազատարարդ է, Վահէ, ըսաւ Գեղամ:

Վահէ համբուրեց շան խոշոր դունչը եւ գամբուը շատ հաճոյք զգաց:

— Այ տանը մօտ ենք, սուր խաչքարը, ըսաւ Վահէ Սիսակին:

— Իրաւունքդ է, ըսաւ Սիսակ, դո՛ւն պէտք է տաս ներսէս պապիկին:

— Երբ տունէն ներս մտան, ընդառաջ ելաւ Վահէի քոյրը:

— Պապին ի՞նչպէս է, հարցուց տղան անձկութեամբ:

— Խեղճ պապի, վերջին վայրկեանները կ'ապրի, մինչեւ վերջ Վահէ կ'ըսէ, նայինք պիտի զգա՞յ թէ եկած ես: Քարը բերի՞ր:

— Այո՛, Անիի մայր եկեղեցիէն առինք, վրան խաչ կայ, տե՛ս, ինչ գեղեցիկ խաչ գծուած է:

Մարոյ քոյրիկը ձեռքը առաւ:

— Համբուրէ, սուրբ քար է, ըսաւ Վահէ:

Մարոյ աչքերուն տարաւ, շրթներուն տարաւ ու համբուրեց խոշոր կերպով:

Ներս մտան ծերունիին սենեակը, Վահէ վազեց անկողինին քով եւ կանչեց.

— Պապի, պապի, ես եմ, Վահէն եմ, ահա խաչքարը բերինք Անիէն:

Ծերունին, որ նուազած էր, կարծես զերբնական ոյժ առաւ, նստեցաւ անկողինին մէջ, լայն բացաւ աչքերը: Խաչքարը իր դիրկը դրին, նա շոշափեց այդ սուրբ նշխարը: Ոսկրոտ մատները քանի մը անգամ դարձան խաչքարին շուրջը, կ'ուզէր համբուրել, բայց ոյժ չունէր վերցնելու: Վահէ վերցուց խաչքարը, մօտեցուց շրթներուն. ծերունին համբուրեց եւ աչքերէն իջան Անիի աղբերակին պէս անոյշ արցունքներ:

— Վահէ, մօտս եկուր, ըսաւ ծերունին, խաչքարը կուրծքիս վրայ դիր եւ գլուխդ բազուկներուս մէջ: Տղան կատարեց ծերունիին փափաքը: Այսօր կեանքիս ամէնէն երջանիկ օրն է. մարդիկ լացով կը մեռնին, իսկ ես՝ ժպիտով: Վահէ, տես՞ր Աշոտ Երկաթի գերեզմանը:

— Տեսայ, պապի:

— Համբուրեցի՞ր մայր եկեղեցիին փէշերը, Աշոտ Ողորմածին շիրիմը:

— Այո՛, պապի, համբուրեցի:

— Վահէ, անոնք չեն մեռած, անոնց շիրիմը Հայութեան սրտին մէջն է, տես ի՞նչ փառաւոր զգեստներ հագուած մեր տունը կու գան:

— Պապի, բան չեմ տեսներ:

— Տղաս, դուն ալ պիտի տեսնես, բոլոր Հայերն ալ պիտի տեսնեն: Անին մերն է:

Գեղամ եւ Միսակ լուռ կեցեր էին, անոնց սրտէն սարսուռ անցաւ երբ ծերունիին շրթներէն լսեցին սըրբազան ուխտ մը. Անին մերն է:



Պապի, ես եմ, Վահէն, ահա խաչքարը բերինք Անիէն...

Ներսէս պապին ձեռքերը թուլցան, գլուխը դարձեալ ինկաւ բարձին վրայ: Վահէն դրկեց զինքը եւ արցունքով կանչեց.

— Պապի... պապի...:

— Անի՛... Անի՛... հազիւ լսելի՛ վերջին ձայնն եղաւ:

Տաճատ, Անձեւացիներու իշխանը, շատ քաջ, անուանի ու բարի էր: Չինքը կը սիրէր Հայոց Սմբատ արքան, Պաղտատի սուլթանը եւ Հոռոմներու թագաւորը:

Պաղտատի սուլթանը երկու տղայ ունէր. կանչեց զիրենք եւ ըսաւ.

— Զաւակներս, մեռնելէ առաջ կ'ուզեմ թագաւորութիւնս բաժնել ձեր մէջ, արդէն իրարու հետ հաշտ չէք երթար, չեմ ուզեր որ պատերազմ եւ արիւնահեղութիւն ըլլայ երկուքիդ մէջ:

Փոքրիկ տղան ըսաւ.

— Հայր, տուր ինչ բաժին որ ինձ կ'իյնայ հարըստութենէդ. դանձեր, կերպաններ, ձի ու ջորի, եւ ծառաներ. ես երկիր եւ իշխանութիւն չեմ ուզեր, երթամ ազատութեամբ աշխարհս վայելեմ:

Թագաւորը սաստիկ տրտմեցաւ եւ ըսաւ.

— Չէ տղաս, քեզի չի վայլեր որ հասարակ մարդու պէս երթաս, ուտես խմես եւ անառակ կեանք անցընես:

— Կը նախընտրեմ լայն աշխարհը սովորական մարդու պէս ապրիլ՝ քան այս ոսկեղէն վանդակը, պատասխանեց տղան:

Տղան առաւ իր բաժինը, հազար ծառայ եւ հազար

աղախին, ոսկի եւ արծաթ, թանկագին կերպասներ ու
հազար ուղտի վրայ բարձած՝ մեկնեցաւ դէպի Հայաս-
տան:

Հայրը լալով դինքը ճամբայ դրաւ եւ երբ որդին
ուտքը ասպանդակին վրայ անցուց, հայրը երկու ձեռ-
քերով իր երկու աչքերը զոցեց որ լացը չտեսնեն:

Տղան գնաց հասաւ Անձեւացիներու երկիրը եւ բա-
նակ դարկաւ Շահաստան դաշտին վրայ: Տաճատ իշ-
խանին լուր տուին թէ անթիւ զօրքերու բազմութիւն
մը եկած եւ բանակած է Շահաստանի դաշտին վրայ:

Քիչ զինուորներով իշխանը գնաց տեսնելու թէ ո՛վ
են եկողները: Սուլթանի որդին մօտակայ ձորերու մէջ
որսի ելած էր, ու հանդիպեցաւ Տաճատի զինուորնե-
րուն: Ասոնցմէ մին քաշեց իր երկաթէ դաւազանը եւ
սպաննեց խեղճ տղան:

Տաճատ՝ յետոյ իմացաւ թէ սուլթանին որդին էր.
բայց ո՛վ կրնար համոզել սուլթանը թէ իր տղան սը-
խալմամբ սպաննուած էր: Իր զինուորները կողոպտե-
ցին բոլոր գանձերը, կիներն ու ծառաները եւ փախան
իրենց երկիրը:

Տաճատ շատ վախցաւ Պաղտատի ամենազօր թա-
գաւորէն, ամբացուց իր բերդերը, անոնց մէջ հաւա-
տարիմ զինուորներ դրաւ, դռները երկաթով դոցեց,
հեռացաւ հայրենի երկրէն ու գնաց Հոռոմներու թա-
գաւորին քով:

Ձինքը շատ պատուով ու սիրով ընդունեցաւ Հոռոմ
թագաւորը, հրամայեց շքեղ պալատ մը յատկացնել
անոր բնակութեան համար: Տաճատ՝ Վոսփորի գեղե-
ցիկ ամերուն՝ տխուր սրտով կը շքապայէր:

Պաղտատի սուլթանը երբ լսեց իր տղուն մահը, ան-

թիւ զօրք դրկեց ու սուրի եւ կրակի տուաւ Անձեւացի-
ներու բոլոր երկիրը, սակայն չկրցաւ Տաճատի բեր-
դերուն տիրանալ:

Պաղտատի մէջ, թագաւորէն սկսեալ մինչեւ վերջին
մուրացիանը սուգ պահեցին տղուն համար. կիները ի-
րենց մագերը փետտեցին, թագաւորը սեւեր հագաւ,
մուլաները մինարէներէն սիրտ ճմլեցնող երգերով ա-
ղօթեցին:

Սուլթանը մեծ փառքերով իր միւս զաւակը թագա-
ւոր պսակեց բոլոր տէրութեան վրայ, բայց նորէն սու-
գը սեւ փուշի նման սրտին մէջ խրած մնաց եւ չուզեց
իր սեւ զգեստները հանել:

Հինգ տարի յետոյ պատերազմ ծագեցաւ Պաղտատի
սուլթանին եւ Հոռոմներու թագաւորին մէջ: Երկու
կողմէն ալ անթիւ զինուորներ ճակատ զրկուեցան. Հո-
ռոմներու թագաւորը վարձած էր դաղդիացիներ, անդ-
զիացիներ, դերմանացիներ եւ շատ մը պալքանեան ցե-
ղեր, բայց անոնց զօրավարը կը պակսէր: Տաճատի
համբաւը շատ մեծ էր այդ մեծ քաղաքին մէջ. ամէնուն
աչքը իր վրան էր, ամէնուն սիրտը Տաճատը կ'ուզէր:
Թագաւորը զինքը կանչեց եւ ըսաւ.

— Տաճատ, քեզի կը յանձնեմ այս անթիւ բանակը,
մեր յաղթանակը, մեր պատիւը:

Ամիս մը ճամբորդելէ վերջ, Հոռոմներու բանակը
հասաւ Եփրատի ափերը: Կատաղի հանդիպում եղաւ
երկու թշնամիներու միջեւ. գետը ներկուեցաւ կարմիր
արիւնով. դիակներ ու վիրաւորներ իրարու վրայ ին-
կած էին ու միայն տարազներէն կը հասկցուէր թէ ո՛րն
է պաղտատցի եւ ո՛րը հոռոմ:

Սուլթանին բանակը չկրցաւ դիմանալ եւ երեկոյ-

եան մօտ ցրուեցաւ լեռներու եւ դաշտերու մէջ. ամէն ոք կը ջանար իր կեանքը ազատել ու մեռած կամ գերի չիյնալ թշնամիին ձեռքը:

Հոռոմները գիրենք հալածեցին շատ երկար ժամանակ. բայց մէկը կար ասոնց մէջ որուն ձին յոգնած էր, իջած նստած էր մինակը քարի մը վրայ այնքան տըրտում եւ լքուած՝ որ սիրով պիտի ընարէր մեռնիլ քան այսպէս կեանքն ազատել: Տաճատ հալածողներու առաջիններէն էր. տեսաւ քարին վրայ նստողը.

— Ո՞վ ես դու, հարցուց գթալիբ չէչտով:

— Ես այս գինուորներու զօրավարն եմ, որոնք նապաստակի պէս կը փախչին: Ես Պաղտատի թագաւորին տղան եմ. սպաննէ զիս, մահը սիրելի է այս ամօթալի կեանքէն աւելի:

— Ո՛չ, ըսաւ Տաճատ, դեռ երիտասարդ ես, քեզի համար դեռ պահուած են՝ գեղեցիկ զարուհներ եւ հայրդ քեզի կը սպասէ:

Տաճատ իջաւ իր ձիէն, իր Հոռոմի տարազը անոր հագուեցուց եւ արագավազ ձի մը տալով՝ զինքը տարաւ իր վրանը:

Քանի մը օր վերջ Հոռոմներու յաղթական բանակը սկսաւ դէպի մայրաքաղաք դառնալ:

Արդէն արագավազ ձիաւորներ աւետիսը տարած էին թագաւորին եւ ամբողջ Կոստանդնուպոլիսը դրօշազարդուած էր, պատշգամներէն կախած էին թանկագին կերպասներ. թագաւորը անհամբեր կը սպասէր իր բանակին:

Երբ մայրաքաղաք հասան, թագաւորը համբուրեց Տաճատը, հագուեցուց ամենաթանկագին ծիրանի մը, հրաման տուաւ որ մէկ զուլպան կարմիր, միւսը դեղին

ըլլայ, ինչպէս սովորութիւն է մեծ իշխաններուն: Ո՛չ ոք դիտէր թէ ով էր Տաճատի քովինը, ոչ ոք կը համարձակէր հարցնել. ամէնքը կը կարծէին թէ հաւատարիմ թիկնապահն էր:

Տաճատ զնաց իր պալատը, համբուրեց իր զաւակներն ու կինը: Ծուռով ձգեց այդ փառաւոր քաղաքը, իր պատիւները՝ ու վերադարձաւ հայրենի աշխարհը:

Բերդերը չէին առնուած, անոնց դռները տակաւին դոց՝ կարծես Տաճատին կը սպասէին:

Հոն ձգեց իր կինն ու զաւակները եւ ինքը սուլթանին տղուն հետ մեկնեցաւ դէպի Պաղտատ:

Քաղաքին արուարձաններուն մէջ փոքրիկ տուն մը վարձեց եւ ըսաւ թագաւորին տղուն.

— Դուն առ այժմ հոս կեցիր. լաւ չէ որ իսկոյն հօրդ երթաս, ծեր է, կրնայ ուրախութենէն յանկարծամահ ըլլալ:

Ինքը զնաց սուլթանին պալատը: Պալատի կառավարիչին ներկայացաւ եւ ըսաւ.

— Ես հայ եմ, Հոռոմներու երկրէն փախայ, եկայ Պաղտատի մեծափառ սուլթանին ծառայելու համար:

— Չարմանալի բան է յաղթական թագաւորին քովէն փախչիլ դալ. ըսել է թէ ասիկա փառասէր մէկը չէ, այլ աշխատող եւ հաւատարիմ, ըսաւ ինքնիրեն կառավարիչը: Յետոյ դառնալով Տաճատին ըսաւ.

— Այսօր իսկ քեզ սուլթանին կը ներկայացնեմ:

Երեկոյեան մօտ Տաճատ ներկայացաւ սուլթանին: Խեղճ մարդը ոտքէն գլուխ սեւեր հագած նստած էր իր աթոռին վրայ:

— Ինչո՞ւ սեւ հագած է թագաւորը, հարցուց կամայուկ մը կառավարիչին:

— Չե՞ս գիտեր, ա՛յ մարդ թէ ինչ պատահեցաւ այս քանի մը տարուան մէջ: Մեր թագաւորը երկու որդի ունէր, մէկը իր բաժինը առաւ զնայ Հայաստան եւ հոն Անձեւացիներու անօրէն իշխանը Տաճատ՝ զինքը դաւաճող սպաննեց, միւսը պատերազմի դաշտին վրայ ինկաւ մեռաւ:

— Լաւ գիտե՞ս թէ միւս տղան պատերազմի դաշտին վրայ մեռաւ, հարցուց Տաճատ:

— Աչքով տեսնողներ եկան պատմեցին:

— Սարսափած մարդերու խօսք է, ամէն տեղ թըշնամի եւ մահ կը տեսնեն:

— Դո՞ւ միայն կաս աշխարհիս մէջ մահէն չվախցող, որ մեծ մեծ կը խօսիս, ըսաւ կառավարիչը:

— Ինձի նայէ, ես կը մեղքնամ ձեր ծերունի թագաւորին վրայ, կը տեսնէք թէ օրէ օր կը մաշի. ես այդ պատերազմին մէջ էի եւ լաւ գիտեմ որ թագաւորին տղան զերի ինկած է եւ ոչ թէ մեռած: Թող թագաւորը ինձ որեւէ նշան մը տայ՝ տանիմ իր տղուն եւ անկից ալ իրեն նշան մը բերեմ:

Իսկոյն Տաճատը կրկին թագաւորին ներկայացուցին, որ լալով եւ հեծկլտալով հարցուց.

— Ո՛վ բարի մարդ, բարի լուրերու դու հրեշտակ, ճի՞շտ է թէ զաւակս ողջ է ու գերի ինկած Հոռոմներու ձեռքը:

— Հաւատա՛ ինձ, տէր արքայ, պատասխանեց Տաճատ, ես աչքովս տեսայ զինքը Հոռոմ զօրավարի մը բով:

Սուլթանը բրկեց Տաճակը, համբուրեց զանիկա եւ հրամայեց ամէն պատիւ ընել:

— Ելի՛ր, տէր արքայ, ըսաւ Տաճատ, վերցուր վրա-

յեղ այդ սուգի զգեստները, քիչ ժամանակէն զաւակդ քու զերկդ պիտի գտնես:

— Սակայն հաւատալս չի դար, ըսաւ թագաւորը: Մի՛ խաբեր ծերունիի մը վիրաւոր սիրտը. որքան զանձ կ'ուզես ա՛ն եւ զնա՛ զաւակս ազատէ:

— Այսօր իսկ զայն քու գրկիդ մէջ պիտի ունենաս, ըսաւ Տաճատ:

Սուլթանը թոյլ չտուաւ Տաճատին այդ օրը իր պալատէն հեռանալ. կերան, խմեցին ու հանեց իր սուգի զգեստները, հրամայեց ամէնէն աւելի մարգարտազարդ վերարկուն բերել, վառել բոլոր ջահերը, գարգարել ոսկի արծաթ դիպակներով բոլոր սրահները:

Դուրս ելաւ Տաճատ պալատէն ու իր կողմը կանչելով տան հազարապետը, ականջն ի վար փոփսաց որ մարդ չլսէ.

— Ես եմ Տաճատը, Հոռոմներու զօրավարը: Ես ազատեցի թագաւորին զաւակը, որովհետեւ ակամայ մեղք մը ունիմ քաւելու: Ալ չկրցաւ առաջ տանիլ իր գաղտնիքներն յայտնելու: Դուն, ըսաւ, հեռացուր սուլթանին պալատէն բոլոր մոմէ ջահերը, դահլիճին մէջ հազիւ լոյս մը զտնուի. ծեր մարդ մը, կրնայ յանկարծակի մեռնիլ ուրախութենէն: Ես կ'երթամ իր զաւակը բերելու:

Հազարապետը հրամայեց ամէն բան կարգադրել այդ օտարականին ըսածին պէս:

Քիչ ժամանակ անցաւ, Տաճատ սուլթանին զաւակին ձեռքէն քոնած հասաւ պալատ: Բոլոր ծառաները եւ իշխանները դուրս թափեցան. չէին հաւատար իրենց աչքերուն: Ալլահը մեծ է, ըսին, եւ առանց աղմուկի մտան թագաւորին դահլիճը:

— Ահաւասիկ քու Մուսէ զաւակդ, ըսաւ Տաճատ բարձրաձայն:

— Լոյս բերէք, լոյս բերէք տեսնեմ իր լոյս երեսները, գոչեց թագաւորը:

Տաճատ տղուն աջ ձեռքը դրաւ հօրը ձեռքին մէջ:

— Լոյս, լոյս բերէք, գոչեց կրկին թագաւորը:

Բերին հազարաւոր մոմեր, սրահը արքայութեան պէս լուսաւորուեցաւ: Թագաւորը տեսաւ իր սրգին, համբուրեց զայն ու նուազած գետին ինկաւ. վրան վարդի ջուր ցանեցին: Բացաւ իր աչքերը, սակայն ուրախութիւնը ցաւէն աւելի զօրաւոր է. կրկին նուաղեցաւ. դարձեալ վարդի ջուր ցանեցին երեսին ու վեր ելաւ, իր սրգին աջ կողմը, Տաճատը ձախ կողմը նրատեցուց ու չէր գիտեր թէ ո՛րը համբուրէր:

— Տէր արքայ, ըսաւ Տաճատ, ես Անձեւացիներու երկրին իշխանն եմ, Տաճատը. հոն ժամանակին քու փոքրիկ զաւակդ սպաննուեցաւ. իմ հրամանէս եւ կամքէս դուրս ոճիր մ'էր զոր զործեցին զինուորներս եւ ես ինձ պարտք դրի անձամբ քաւել այդ մեղքը: Հոս եմ, սպաննէ զիս իբրեւ յանցաւոր:

— Տաճատ, որդեակ իմ Տաճատ, սիրտս երկու սուր մխուած էր, մէկը դուն հանեցիր, միւսը մխուած կը մնայ. դուն քու ձեռքերդ արիւնով չես ներկած: Ես ի՞նչպէս արիւնով լուամ ձեռքերս: Այս զաւակս քուկդ է. ես իմ մեռած զաւկիս քով պիտի երթամ քիչ ատենէն. դուն եղիր Մուսէիս եղբայր եւ բարեկամ: Պաղտատի թագաւորութեան անսահման երկիրը ձեզի կը թողու՛մ, հոս կեցիր հարստութեան, փառքի եւ գանձերու մէջ:

— Տէր արքայ, ըսաւ Տաճատ, իմ երկրիս հողը բուրումնալից, մեր երկինքը բիւրեղի պէս կապոյտ է, մեր

լեռները թագաւորի պալատի պէս շքեղ են. ի՞նչպէս ապրիմ այս օտար երկրին մէջ: Հրաման տուր երթամ իմ հայրենի աշխարհը, եթէ ինձ դեռ երկար ապրելու բախտ սահմանուած է՝ հոն ապրիմ, հոն փակեմ աչքերս մեր արեւուն նայելով:

Սուլթանը հրամայեց բեռներով գանձ տալ Տաճատին, եւ նա հաղար ուղտի վրայ բեռցուցած՝ մեկնեցաւ դէպի Անձեւացիներու երկիրը:

Թագաւորը ըսաւ իր իշխաններուն եւ ծառաներուն.

— Լաւ է մարդ իր հայրենիքին մէջ չոր հաց ուտէ՛քան օտար աշխարհի թագաւոր ըլլայ:

Հնակարկատ Սերոբ՝ փոքրիկ կրպակ մ'ունէր Թիֆլիզի Հաւլապար հայկական Թաղին մէջ, նեղ եւ մութ փողոցի մը վրայ: Հնադարեան պատշգամներ՝ ժապաւէնի պէս գեղեցիկ հիւսուած բազրիկներով կը զարդարէին անոր խանութին վերեւը: Մաշած ցուցատախտակ մը ցոյց կու տար անոր կրպակին տեղը հայերէն գիրերով - Հնակարկատ Սերոբ:

Բազմանդամ ընտանիքի հայր, հազիւ օրապահիկը կը հանէր, բայց գոհ էր իր վիճակէն. ուրախ երգերով կ'անցընէր օրը եւ մուրճի հարուածները միայն իրենն էին:

Կինը տան հոգերով զբաղած՝ չէր կրնար ուրիշ աշխատանքներով ամուսինին բռնը թեթեւցնել: Սերոբ յաճախ գիշերներն ալ կ'աշխատէր բան մը աւելի շահելու համար: Վեց զաւակ ունէր. հինգ մանչուկներ եւ մէկ աղջիկ, Մարիամը. բոլորն ալ տակաւին շատ փոքր էին, տարիներ պէտք էին որ Արամ, իր անդրանիկը, մեծնար եւ հօրը օգնէր:

Կիրակի օրերը փոքրիկներն առած Կուր գետին ասփերը կը շրջադայէր. երբ Մետեխի բանտին քովէն անցնէին, անոր մասին շատ խորհրդաւոր պատմութիւններ կը պատմէր փոքրիկներուն: Տղաք վախով կը նայէին

այդ մասը բերդին, անոր հաստ ճաղերով նեղ պատուհաններուն եւ կարծես չար ոգիներ կը տեսնէին այդ սարսափելի լուսամուտներուն ետեւը:

Չատկի օր մը գիրենք տարաւ հասարակաց պարտէզը. օդը գարնանային էր, դաղջ տաքութիւն մը իջած էր հողին մէջ, գարնանածաղիկը առատօրէն աճած էր, աքախաները նոր ծաղիկներ արձակած էին եւ անոյշ բոյր մը բռնած էր պարտէզը: Անցնող դարձող գինքը ուրախ կը բարեւէին, ամբողջ քաղաքը կը ճանչնար հնակարկատ Սերորը, եւ ինքը հպարտ էր ասոր համար:

Այդ օրը իրենց մօտէն անցաւ հարուստ պարոն մը իր տիկնոջ եւ փոքրիկ աղջնակին հետ. չորս տարեկան հազիւ կար փոքրիկը, ճիշտ Մարիամին տարիքն ունէր: Նա հագուած էր շատ գեղեցիկ. երկինքէն իջած հրեշտակի կը նմանէր, յոռքերուն կը կրէր զոյգ մը ոսկի սօլեր, որոնք արեւուն տակ կը ցոլանային: Հարուստ աղջնակը նայեցաւ Մարիամին եւ արհամարհական ընչացք մ'ըրաւ, թեթեւ կերպով դրաւ յոռքերն ու վերցուց. Մարիամ տեսաւ աղջնակին ոսկի սօլերը, անոնց փայլը իր սիրտը մտաւ, նայեցաւ, երկա՛ր նայեցաւ, մինչ հարուստ աղջնակը, կարծես փոքրիկին սիրտը աւելի խոցելու համար նազելով կ'երթար:

— Հայրիկ, ես ալ ոսկի սօլեր կ'ուզեմ:

— Աղջիկ, մենք աղքատ ենք, ոսկի սօլեր հարուստներուն հարուստը միայն կ'ունենայ:

— Ո՛չ, հայրիկ, ոսկի սօլեր կ'ուզեմ:

Իր աչքերէն ինկան գեղեցիկ արցունքներ. առաջին անձրեւն էր գարնանային կեանքի մը: Իր լացը շատցաւ, սիրտը սկսաւ ծփալ.

— Հայրիկ, ոսկի սօլեր կ'ուզեմ, կը կրկնէր անդադար:



Հայրիկ, ես ալ ոսկի սօլեր կ'ուզեմ...

Հայրը ստիպուեցաւ տուն վերադառնալ, ճամբան ամէն մարդ կը նայէր լացող աղջկան.

— Մա'րդ Աստուծոյ, աղուն ձայնը չկտրե՞ս, ի՞նչ կ'ուզէ, տո՛ւր, կ'ըսէին անցորդները:

— Աստուած միայն կրնայ տալ, կը պատասխանէր հնահարկատը:

Տան մէջ Մարիամ շարունակեց լալ: Հայր ու մայր ամէն խոստում ըրին, զինքը յորդորեցին որ չլայ, բայց Մարիամ շարունակեց իր լացը. ոսկի սօլեր կ'ուզէր:

Այդ գիշեր աղջիկը չքնացաւ, հայր ու մայր ստիպուեցան հսկել անարին մօտ. յաճախ կը հառաչէր եւ ոսկի սօլեր կ'ուզեմ, կը կրկնէր: Փոքրիկ էր, չէր գիտեր թէ աշխարհի բարեքները գէշ կերպով բաժնուած էին: *

Յաջորդ օրը երբ հայրը գործի պիտի երթար՝ Մարիամ ոտքերուն պլլուեցաւ լալագին պաղատելով.

— Հայրի՛կ, ոսկի սօլեր կ'ուզեմ:

— Այո՛, աղջիկս, պատասխանեց հայրը, երթամ քեզի ոսկի սօլեր գնեմ:

— Ես ալ հետդ գամ, իմ ձեռքերովս հագուիմ:

Հայրը շուարած մնաց, ի՛նչպէս խարէր այդ հրեշտակը:

Մարիամ շարաթներով իր լացը չզգալընցուց, հնահարկատի տունը սուգի փոխուեցաւ, իր ուրախ երգերը այլևս չէին լսուեր, դրացիներն ալ տրտում էին:

Փոքրիկը նիհարեցաւ, կորսնցուց իր վարդագոյն այտերը, աչքերը փոսն ինկան: Հայր ու մայր անսահման գուրգուրանքով պատեցին զինքը, սակայն անօգուտ սէր էր: Աղջնակը քերժով անկողին ինկաւ: Հնահարկատն ու կիներ տրտում մոմերու պէս կը հսկէին քովը եւ սուր

կ'անցնէր իրենց սրտէն երբ կը լսէին Մարիամի մարմրուն ձայնը.

— Հայրի՛կ, ոսկի սօլեր կ'ուզեմ:

Բովանդակ Թիֆլիզը լսեց Մարիամին պատմութիւնը, պառաններն եկան զինքն յորդորելու եւ վրան խորհրդաւոր աղօթքներ ընելու.

Թերեւս չար ոգի մը մտեր է փորը, կ'ըսէին իրարու: Վիզէն կապոյտ հմայեկ կախեցիկ, բայց օգուտ չեղաւ: Փոքրիկին սիրտը շատ վիրաւոր էր:

Խումբ մը բարեսիրտ տիկիները դիմեցին հարուստին՝ որ Մարիամին նուիրէ իր աղջնակին ոսկի սօլերը, բայց նա մերժեց ըսելով.

— Փարիզէն բերած եմ, եւ աղջիկս շատ կը սիրէ. դրամ ունիք՝ դուք ալ գնեցէք:

Գթասիրտ տիկիները իրարու մէջ դրամ հաւաքեցին ու Փարիզէն նման զոյգ մը ոսկի սօլեր ապսպրեցին խեղճ Մարիամին համար:

Բայց աղջնակին վիճակը ամէն օր կը ծանրանար, սկսեր էր արգէն զառանցել:

Հայրը յուսահատ, գլուխը պատերուն կը զարնէր, մայրն անխօս էր դարձեր, սուր խոթէիր՝ սրտէն արիւն չէր ելլեր:

— Հայրի՛կ, հայրի՛կ, տե՛ս, դարակին վրայ զոյգ մը ոսկի սօլեր կան, բեր որ ոտքերուն անցընեմ:

Հայրը տրտում կը նայէր դարակին եւ միայն զոյգ մը հին ու կարկտած կօշիկներ կը տեսնէր. դարձեալ կը կախէր գլուխը խուլ հեկեկանքով:

— Հայրի՛կ, ոսկի սօլերս բերե՞ր, կը հարցնէր յանկարծ մեղմ ձայնով:

— Այո՛, աղջիկս, ելի՛ր հագուէ:

Բայց Մարիամ ոյժ չունէր անկողինէն ելլելու. աչ-



Մարիամ, հագիս, ելի՛ր, ոսկի սօլերդ հասամ...

քերը մեծ մեծ կը բանար ու դարձեալ խուփ կու տար, քարը տալով փոքրիկ դուխը յարդէ բարձին վրայ:

Փոքրիկին վիշտ շատ մեծ էր, սպաննելու չափ սուր էր, ո՛չ մէկ յոյս կար բժշկութեան: Քաղաքին մէջ ամէն մարդ Մարիամին վրայ կը խօսէր ու կը դատապարտէր անսիրտ հարուստը: «Մշակ» լրագիրն ալ գրեց խեղճ հնակարկատի սուգին վրայ:

Բարեսիրտ տիկիններն անձկութեամբ կը սպասէին որ Փարիզէն հասնէին Մարիամին ոսկի սօլերը: Հիւանդին վիճակը օրէ օր աւելի կը ծանրանար, այժմ ոյժ չունէր ոսկի սօլեր իսկ ուզելու:

Եկաւ Հաւլապարի ծերունի քահանան, աղջնակին վրայ ՅԵ տուն Հաւատով խոստովանիմ կարգաց:

— Հաւատք ունեցէք Աստուծոյ ամենակարող զօրութեանը վրայ, ըսաւ ու գնաց:

Շարաթ մը յետոյ երբ Փարիզէն հասան Մարիամի ոսկի սօլերը, արդէն Հաւլապարի եկեղեցիին տխուր զանգակը կը հնչէր:

— Մարիա՛մ, հոգի՛ս, ելի՛ր, ոսկի սօլերդ հասան, կը կրկնէր մայրը մազերը փետտելով:

Բայց Մարիամին դէմքը աշնան վարդի գոյն առած էր. կը դիտէր մութ ձեղունը, ուր կարծես կը տեսնէր զոյգ մը ոսկի սօլեր:

Արաքս գետի ափին բերդ մը կայ, շատ հին ժամանակներէ կը մնայ իր սեւցած պատերով ու մաշած քարերով: Այդ բերդը դեռ հոն է եւ սարսափ կ'ազդէ բնակիչներուն, մանաւանդ աղջիկներուն, որոնք քովէն վազելով կ'անցնին եւ կ'ըսեն թէ լալու ձայներ կը լսուին եւ ոգիները զիրենք կը հալածեն:

Բարձր ժայռի մը վրան է բերդը եւ թեւաւոր ցուլեր ու վիշապներ՝ արդէն շատոնց քարացած, անոր դրան պահակներն են: Այդ երկիրը ժամանակին չոր անապատ էր ու գետը շատ հեռուէն կ'անցնէր, հոն չկար ոսկի խաղող, կաթի պէս տանձ ու խնձոր, ցորենը կ'այրէր արեւէն եւ ոչ մէկ ծաղիկ կը բուսնէր: Բայց բնակիչները կը սիրէին այդ հողը եւ չէին ուզեր աւելի բարեբեր երկիրներ երթալ, հոն ծնած եւ հոն մեռած էին իրենց հայրերը:

Ամէն նոր տարի՝ Օգոստոս ամսուան մեր հեթանոս հայրերը զոհեր կ'ընէին իրենց աստուածներուն որ տարին առատ ըլլար եւ ցորենը բուսնէր ու միրգերը դեղեցիկ ըլլային:

Եղաւ տարի մ'ալ որ սաստիկ երկրաշարժ պատահեցաւ, հողը ճեղքուեցաւ, տունները փլան եւ հսկայ ժայռեր փրթան Մասիս լեռնէն:

Քաղաքին ծերերը եւ քուրմերը հաւաքուեցան եւ ըսին.

— Աստուածները մեզի սաստիկ բարկացած են, անոնք կ'ուզեն որ Հայաստանի ամենագեղեցիկ աղջիկը իրենց նուիրուի:

Անոնք շրջեցան մեր երկիրը, գացին Արմաւիր, գացին Արտաշատ, անցան Տիգրանակերտը եւ դարձան դէպի Վան եւ քիչ անդին Արտամէտ քաղաքը կար զբոսաւորութեամբ մէջ, հոն գտան Հայաստանի ամենագեղեցիկ աղջիկը, Արաքսին:

Սեւ վիճակը Արաքսին ինկաւ, հագիւ տառնվեց տարեկան կար եւ կարծես դեռ մօրը կաթէն նոր կտրուած էր: Ասին Արաքսին ու փառաւոր կառքի մը վրայ՝ տարին իրենց երկիրը: Տասներկու ճերմակ ձիեր կը քաշէին անոր կառքը եւ կոյսեր ու կիներ կը պարէին կառքին առջեւէն:

Երբ հասան իրենց աշխարհը, ժողովուրդը ուրախութեամբ լեցուած՝ սոսկալի ազազակներ հանեց, զինուորական փողերը հնչեցին եւ բոլոր ասպետները իրենց սուրերը մերկացուցած՝ անոր առջեւ պատիւի կեցան:

Եօթը օր եւ եօթը դիշեր ուրախութիւն ըրին, ապա հաւաքուեցան երկրին բոլոր քուրմերը եւ աղօթեցին Արաքսին վրայ, յետոյ զինքը օծեցին անուշահոտ իւղերով, գլխուն վարդէ պսակ մը դրին, ճերմակ զգեստներ հագուեցուցին ու մեծ յաղթանակով տարին դէպի հին օրերու բերդը:

Մերունի քուրմ մը բարձրացաւ ժայռի մը վրայ եւ հրամայեց որ բոլորը լռեն:

— Ո՞վ աստուածներ, ըսաւ, ահա ձեզի կը նուիրենք Հայաստանի ամէնէն գեղեցիկ աղջիկը. դուք մեր երկրին առատութիւն տուէք, դուք բռնեցէք որ մեր ուս-

քերուն տակէն հողը չփախչի եւ մենք երջանիկ ապրինք: Այս կոյս աղջիկը բերդին մէջ պիտի մեռնի ձեր սիրոյն համար: Ո՞վ աստուածներ, ձեզի կը նուիրենք Արաքսին:

Բացին սեւ բերդին երկաթէ դռները եւ խեղճ Արաքսին հոն բանտեցին, քառասուն բանալիներով դռները կղպեցին ու գացին:

Խեղճ Արաքսին սարսափելի ճիչերով ու լացով մարած գետին ինկաւ, բայց անգութ ծերերը փակեցին բերդին դռները եւ իրենց սրտերն ու կացին:

Անցան երկար օրեր. Արաքսին նստած նեղ պատուհանի մը առջեւ կը դիտէր արտմութեամբ դաշտերն ու բնակիչները: Խուճ մը տատրակներ ավէն օր անոր կը բերէին հացի կտորներ, զոր խառնելով իր աղի արցունքներուն այնպէս կ'ուտէր. հարիւրուոր ճնճղակներ կտուցներով ջուր կը բերէին ու կը լեցնէին քարի մը խորշը, որպէսզի Արաքսին ծարաւէն չմեռնի:

Անցան երկար օրեր, աղջիկը կամաց կամաց աշնան ծաղիկի պէս կորսնցուց իր մանկական գեղեցիկութիւնը եւ չար ծերերու սրտերը աւելի քարացան:

Օր մը յանկարծ փողի ամպ մը տեսնուեցաւ հեռուն, կարծես որոտում կ'ելլէր, ահա հսկայ եւ ուժեղ երիտասարդ մը երեցաւ այդ երկրի հորիզոնին վրայ, եկաւ մօտեցաւ սեւ բերդին, որուն աշտարակին վրայ պատուհանի մը առջեւ նստած էր թշուառ Արաքսին: Այդ հսկան Փառնակ կը կոչուէր, հին օրերու սարսափելի մարդը՝ որուն մասին շատ զարմանքով կը խօսի մեր պատմութիւնը: Փառնակ տեսաւ հրաշալի աղջիկը, նայեցաւ, երկա՛ր նայեցաւ:

— Ո՞վ ես դու, ճայն տուաւ, աչքերու դէմ արե՞ւ, թէ այս աշխարհիս թագուհին:

— Ո՛հ, ես թշուառ աղջիկ մըն եմ, նուիրուած երկրնքի չար աստուածներուն եւ դատապարտուած այստեղ մեռնելու:

— Ո՛չ, դուն պիտի չմեռնիս այդ անդուծ աստուածներուն համար, գոչեց յանկարծ հսկան, դուն Հայաստանի գեղուհի՛ իմս պիտի ըլլաս, եւ ոչ մէկ մարդ, ոչ ալ բանակներ կրնան քեզ իմ ձեռքէս խլել: Երկու ձեռքերով ցնցեց բերդին դռները, բերգը կարծես հիմերէն պիտի կործանէր:

— Մայրիկ, մեռայ, պոռաց Արաքսի սարսափած: Փառնակ թող տուաւ երկաթները: Իր շուրջը հաւաքուեցան բոլոր բնակիչները եւ անոնց մէջէն ամէնէն ծերունի քրմապետը առաջ դալով ըսաւ.

— Ո՛վ ես դուն որ կը համարձակիս աստուածներու զոհել խլել: մենք ուխտած ենք գեղանի կոյս մը զոհել անոնց, որպէսզի մեզի առատ բերք շնորհեն ու միշտ հաշտ ըլլան մեզի հետ:

— Անդուծ եւ չար էք դուք եւ ձեր աստուածները. բերէ՛ք բերդին բանալիները, եթէ չէք ուզեր որ բոլորդ այս սուրին բերանը՝ տամ:

Քաշեց իր ահաւոր սուրը եւ կարծես թէ ամպերէն կայծակ ինկաւ: Խուժանը վախէն փախաւ եւ մնաց միայն ծերունի քրմապետը:

— Ո՛վ քոջ Փառնակ, ըսաւ նա, տես մեր դաշտերը ամայի ու չոր են. ոչ ցորեն կը բուսնի եւ ոչ ալ կանաչ թուփերու մէջ սոխակներ կ'երգեն. այս աշխարհը կարծես անիծուած է աստուածներէն, պէտք է ամէնէն թանկագին ընծայով հաշտուինք անոնց հետ: Եթէ կ'ուզես Արաքսին ցմահ քուկդ ըլլայ՝ մէկ պայման կայ:

— Ի՞նչ պայման, հարցուց Փառնակ:

— Կը բե՞ս հեռուն որոտացող գետին ձայնը:

— Այո՛, կը լսեմ այդ առուակին ձայնը:

— Դուն առուակ կը կոչես, բայց նա ժայռեր ու լեռներ փշրելով կ'անցնի ու կ'երթայ առանց կաթիլ մը ջուր տալու մեր դաշտերուն. եթէ կարենաս այդ դահլէժ գետը մեր դաշտերը դարձնել՝ Արաքսին քուկդ պիտի ըլլայ:

Հսկային սիրտն ու աչքերն ամպուեցան, աստիկ բարկացած ըսաւ.

— Տուէ՛ք ինձ եօթը օր եւ եօթը դիշեր, ձեր դաշտերը ովկիանոսի կը վերածեմ:

Փառնակ թաւ դէպի գետը. իր հսկայ մատներով, որոնք երկաթէ բրիչի պէս ուժով էին, սկսաւ հողը փորել ու լայն եւ խոր ճամբայ բանալ: Մեծդի ժայռերը կը նետէր հեռուները, փոշին ամպի պէս կը բարձրանար եւ սոսկալի աղմուկով լեցուեցաւ երկինքը: Գիւղերու եւ քաղաքներու բնակիչները սարսափով կը դիտէին հեռուէն, կարծես թէ աշխարհի վերջն ըլլար:

Փոքրագէջ գետին բերանը գոցեց ժայռերով ու հողով, նետեց հաստ ծառեր որ թումբ ըլլան եւ գետին ջուրը կատգած եւ ապստամբ՝ ուզելով չուզելով դարձուց իր գլուխը դէպի հին օրերու բերդը: Գետը մտաւ իր նոր ճամբան, քաշեց բերդին տակէն, ողողեց չոր դաշտերը՝ յետոյ քրտնած՝ իջաւ դիւղը. բայց հոն կարծես մարդ չկար, միայն պառաւ կին մը նստած ճամբու եզերքին մատաղ կը բաժնէր անցնող դարձողին:

— Մամիկ, որո՞ւ հոգիին համար է այս մատաղը, հարցուց Փառնակ:

— Դուն ողջ մնաս զաւակս, խեղճ Արաքսին համար է:

— Արաքսիի՞ն համար:

— Այո՛, հազիւ երկու օր է որ մեռաւ:

Փառնակ ուժդին մոնչեց, սարսափելի ողբով լե-
ցուց դաշտերն ու ձորերը: Գետը կը հոսէր հսկայ բե-
րանին մէջ հող ու ծառեր:

— Ա՛խ Արաքսի, խեղճ Արաքսի, ըսաւ ու նետուե-
ցաւ դետին մէջ, ու կը լսուէր ալիքներու մէջջէն. Ա՛խ
Արաքսի, խե՛ղճ Արաքսի:

Գետը տարաւ իր հսկայ մարմինը կարծես բեռան
տակ կքած, եւ անոր համար մեր հայրերը այդ դետին
անունը Արաքս դրին:

Փոքրիկ Մարիամը շատ կը սիրէր թռչունները, ա-
մէն օր իր հացի կտորներէն կը նետէր անոնց եւ շատ
անգամ երբ տօն ըլլար ու անուշեղէն ալ ունենար, ան-
պատճառ իր պատուհանին առջեւ կը դնէր առատ փըշ-
րանքներ որ թռչունները դային եւ ուտէին: Ճնճղուկ-
ներն ու տատրակները վարժած էին Մարիամին, չէին
փախչիր իրմէ, յաճախ նոյնիսկ անոր ուսերուն վրայ
կամ ափերուն եզերքը կը թառէին ու կ'ուտէին:

Ո՛րքան դեղեցիկ կ'ըլլար այդ սիրուն աղջնակը երբ
իւր կարմիր դէմքը կը պսակուէր զուարթ թռչուններու
փետուրներով: Շատ անգամ կը բռնէր փոքրիկ ձագե-
րը, կը համբուրէր ու թռիչք կու տար որ զուարթօրէն
ճռուողեն ծառերու վրայ:

Եթէ յանկարծ Մարիամ ծիւ ծիւ կանչէր, բոլոր
ճնճղուկները կը հաւաքուէին իր շուրջը, տատրակները
անոյշ աչքերով տան ցուիքներուն վրայէն վար կ'իջ-
նէին ու պատուհանին առջեւ կը շարուէին: Մարիամ
կը շոյէր զիրենք, կը խօսէր հետերնին եւ եթէ չարու-
թիւն ընէին ու զիրար հրէին՝ կը բարկանար ու խրատ
կու տար ըսելով.

— Պէտք էք ազնիւ ըլլալ, զիրար սիրել եւ եղբոր
պէս ապրիլ:

Մայրը շատ ուրախ էր Մարիամին համար, առանց ցոյց տալու կը նայէր իր աղջնակին, երբ թռչուններուն հետ կը խօսէր:

Ճնճողուկներուն մէջ հատ մը կար որ մէկ թեւ մը չունէր ու իյնալով կը թռչէր, միշտ ետեւ կը մնար երբ Մարիամ անոնց կեր կու տար. բայց աղջնակը ամէնէն շատ այդ խեղճ թռչունը կը սիրէր, իսկոյն ձեռքին մէջ առած առանձին կեր կու տար:

— Մի' նախանձիք, կ'ըսէր միւսներուն, ասիկա հիւանդ է եւ աւելի պէտք ունի խնամքի:

Օր մը լալով գնաց եւ հայրիկին գիրկն ինկաւ ըսելով.

— Հայրիկ, դուն ամէն բան գիտես, չե՞ս կրնար այդ խեղճ թռչնիկին թեւ մը շինել որ միւսներուն պէս կարենայ թռչել. մեղք է, հայրիկ, շատ սիրուն եւ շատ դժբախտ է:

Հայրը խնդաց եւ ըսաւ.

— Աղջիկս, ինչ որ Աստուած չէ տուած՝ մարդիկ չեն կրնար շինել, հոգ մի' ըներ, անիկա առանց մէկ թեւի ալ երջանիկ է:

Մարիամ չէր սիրեր իրենց Միմի կատուն. այդ չար կենդանին օր մը ճնճողուկ մը բռնեց եւ կերաւ. Մարիամ զինքը կը հալածէր եւ կ'ուզէր որ իրենց տունէն ելլէ երթայ, բայց Միմին կը փախչէր մութ տեղերը, կամ աթոռներուն տակ կը պահուրտէր:

— Գիտե՞ս մայրիկ, ըսաւ օր մը, ես ամէնէն շատ ճնճողուկները եւ տատրակները կը սիրեմ. անոնք ցուրտ ձմրան ալ մեր տունէն չեն բաժնուիր, իսկ միւսները ապերախաներ են, կը թողուն մեր երկիրը եւ օտար տեղ կ'երթան:

— Ապերախտ չեն, աղջիկս, ըսաւ մայրը, անոնք

ցուրտին չեն դիմանար, կը մեռնին, անոր համար տաք երկիրներ կ'երթան:

— Հոն իրենց ո՞վ կերակուր կու տայ, հարցուց Մարիամ:

— Աստուած աշխարհիս ամէն կողմ անոնց համար ուտելիք դրած է, ցորենի կամ կորեկի հատիկ մը ո՛ւր որ ալ ըլլայ կը գտնեն:

— Այդ երկիրներուն մէջ բնաւ ձիւն չի՞ գար, միշտ տա՞ք կ'ընէ:

Անգամ մը Փետրուար ամիսին մէջ կէսօրը սովորականին պէս տատրակներն ու ճնճողուկները հաւաքուեցան Մարիամի պատուհանին առջեւ ու կերի կը սպասէին. բայց Մարիամ իրենց ուտելիք չբերաւ:

— Ինչո՞ւ կ'ուշանայ, ըսաւ տատրակ մը:

— Արդեօք մեզ մոռցա՞ւ, աւելցուց ճնճողուկ մը:

— Ո՛րքան ալ ցուրտ կ'ընէ, այս տարի ձմեռը սաստիկ է, ես քիչ մը կը մսիմ, վրայ բերաւ մէկ թեւով թռչնիկը որ կը ջանար պատուհանի ապակիին աւելի մօտենալ:

Տատրակ մը կամացուկ մը կտուցով ապակիին զարկաւ:

— Համբերէ քիչ մը, ըսաւ ընկերը:

— Ինչո՞ւ չի գար, ես շատ անօթի եմ, վրաս մարելիք կու գայ, ըսաւ ուրիշ ճնճողուկ մը:

— Ա՛խ, Աստուած իմ, անօթի պիտի մեռնինք հոս, լալով ըսաւ մէկ թեւով թռչնիկը:

Բոլորը միասին կը նայէին ապակիէն ներս. բարակ վարագոյրը քաշուած էր եւ հազիւ ներսը կը տեսնուէր:

— Լուռ կեցէք, ըսաւ տատրակ մը, ներսը խորհրդաւոր ձայներ կը լսուին:

— Շիտակ է, ըսաւ ճնճողուկ մը, հիւանդ բառը լսեցի:

— Հիւանդ. ո՞վ, հարցուց վախով մէկ թեւով ճնճողուկը:

Մարիամ հիւանդ էր, սաստիկ պաղ առած՝ ջերմով պառկեր էր: Բժիշկը եկած էր զինքը քննելու: Նա մօտեցաւ պատուհանին՝ ջերմաչափը լոյսին նայելու:

— Քառասո՛ւն աստիճան, շատ տաքութիւն ունի, զինքը լաւ ծածկեցէք:

— Հիւանդ է Մարիամ, լսեցի՞ք, ըսաւ տատրակ մը, քառասուն աստիճան տաքութիւն ունի:

— Մենք ի՞նչ պիտի ըլլանք, հարցուց անդիէն նորեկ ճնճողուկ մը:

— Եսասէր, դուն ինքզինքդ կը մտածես. հարցուր թէ ի՞նչ պիտի ըլլայ խեղճ Մարիամը, պոռացին միւսները:

— Բժիշկը մեզմէ լաւ գիտէ թէ ի՞նչ պիտի ընէ. ես խեղճ թռչուն մը ի՞նչ օգուտ կրնամ ունենալ, ինքզինքը արդարացուց նորեկ ճնճողուկը:

— Գէթ սիրտ ունեցիր Մարիամին համար. եթէ ինքը չըլլար՝ բոլորս այս ցուրտին մեռած կ'ըլլայինք, ըսաւ տատրակը բարկանալով:

— Պարոն բժիշկ, աղջիկս փրկէ, ես շատ կը վախեմ, ըսաւ Մարիամին մայրը:

— Ինչ որ պէտք է ըրէ, ամէն ծախք սիրով կ'ընեմ, միայն թէ աղջիկս լաւանայ, աւելցուց հայրը:

Թռչունները շատ աւելի տխուր եւ ընկճուած էին քան թէ Մարիամին ծնողը. անոնք չէին հասկնար մարդկային ցաւերը. բժիշկը իրենց համար վախնալիք մարդ մըն էր: Ոչ մէկ ճիշտ հանեցին. ոչ մէկը առօրեայ թեան մասին կը խորհէր, լուռ կեցած՝ կ'ուզէին



Տան մէջ անառնիս ունի՞ք, հարցուց բժիշկը ծնողքին...

բառեր յափշտակել բժիշկին բերնէն, հասկցան թէ այդ մարդը եկած էր բարիք ընելու համար:

— Տան մէջ անանուխ ունի՞ք, հարցուց բժիշկը ծնողքին:

— Ոչ, պարոն բժիշկ, ձմեռ ատեն անանուխ ո՞ւր կրնանք գտնել:

— Շատ լաւ պիտի ըլլար խաշել ու խմցնել, քրտնեցուցիչ դեղ է:

— Ա՛խ, այս գարունն ալ կ'ուշանայ, կանաչի թել մ'իսկ չի տեսնուիր դաշտերուն մէջ:

— Անանուխ բառը լսեցի, ըսաւ տատրակներէն մին, ո՞վ գիտէ, ի՞նչ ըսել է անանուխ:

— Հոտաւէտ խոտ մըն է, պատասխանեց ճնճուղի մը. ես երբ փորի ցաւ ունենամ՝ քչիկ մը կ'ուտեմ:

— Ուրեմն բժիշկը ըսաւ թէ անանուխ պէտք է խաշել ու խմցնել:

— Անանուխը, տիկին, հոս չի գտնուիր, ըսաւ բրժիշկը. կարելի է Պաղտատի կողմերը գտնել, հոն գարունն է. սակայն Հայաստանէն բաւական հեռու է եւ դժուար է երթալ բերել:

Թռչունները չէին ուզեր բժիշկին բառերէն հատ մ'ալ կորսնցնել, անոնք կը խորհէին թէ այդ տարօրինակ մարդը ամէն բան կրնայ ընել:

— Ընկերներ, ըսաւ ճնճուղի մը, Մարիամին անանուխ պէտք է եւ Պաղտատի կողմերը կը գտնուի:

— Բայց ո՞ւր է Պաղտատը:

— Ես գիտեմ, ըսաւ տարեց ճնճուղի մը, մեր այս Բերկրիէն պէտք է իջնել Վանի լիճը, անկից Մոկաց լեռները, ապա կու գայ Պաղտատի դաշտագետիկներ:

Իսկոյն թռիչք առին բոլորը. գուրսը ձիւն կը տեղար եւ թերեւս կիրճերու մէջ բուք ալ ըլլար: Միայն



... րացաւ պատուհանը... անանուխի քարմ տերեւներ՝ եւ վրան վարդ մը...

մէկ թեւով ճնճողուկը մնաց պատուհանին առջեւ. ա՛յլ չէր լսեր տան մէջ խորհրդաւոր ձայներ: Վարագոյրները նոյնպէս գոց էին եւ առտուան աղօտ լոյսը հազիւ ներս կը թափանցէր:

— Պիտի կարենա՞ն մէկ օրուան մէջ երթալ եւ գալ. ինքը գաղափար չունէր արագ թռիչքի, միշտ իյնալով քալեր էր: Մնաց մինակը պատուհանին տակ, ջանաց ապակիէն ներս տեսնել Մարիամը՝ որ կը տքար:

Երեկոյեան շատ ուշ ատեն թռչուններու սեւ երամ մը եկաւ. ամէն մէկուն կտուցին վրայ կանաչ խոտ մը կար. բոլորը հաւաքուեցան Մարիամի պատուհանին առջեւ եւ կարծես թէ հոն դարուն բացուեցաւ: Մարիամին մայրը տեսաւ այդ կանաչը եւ անոր վրայ ճերմակ վարդ մը. ամէնէն փոքրիկ ճնճողուկը բերած էր այդ վարդը: Կինը զարմացած բացաւ պատուհանը, եւ ի՞նչ տեսնէ, անանուխի թարմ տերեւներ ու վրան վարդ մը:

— Անանուխ է, գոչեց զարմացած, ի՞նչ հրաշք է: Խաչեց թարմ տերեւները եւ խմցուց իր աղջնակին: Մարիամ լաւ մը քրտնեցաւ եւ ջերմը կարծես դանա- կի պէս կտրեցաւ:

Թռչունները այդ գիշեր թառեցան Մարիամի տան խորշերուն մէջ. յաջորդ առաւօտ կանուխ պատուհանին առջեւն էին, լուր մը կ'ուզէին Մարիամին մասին, երբ ուրախ դէմքով աղջնակին մայրը բացաւ պատուհանը եւ լի բուռով հացի փշրանքներ նետեց անոնց առջեւ: Ճնճողուկները հասկցան թէ Մարիամ առողջացեր էր:

անթիւ գերիներ եւ հարստութիւն հաւաքած էր՝ Սիւրիա տանելու եւ գերիները վաճառելու համար: Ասոնց մէջ կային Բաղէշցի երեք փոքրիկ մանչուկներ, որ չը- ւանով իրարու կապած՝ քաշկուտելով կը տանէին:

Շատ փոքրիկ էին, հազիւ վեցէն եօթը տարեկան: Այդ սիրտ չունեցող զինուորներէն ո՞վ մտիկ կ'ընէր անոնց լացին:

— Գիտէ՞ք, ըսաւ անոնցմէ մէկը, յանկարծ լացը կտրելով. մայրիկս ինձի սորվեցուց, թէ երբ նեղու- թեան մէջ ըլլաս՝ Աստուածամօր դիմէ: Եկէք մենք ալ աղօթենք Տիրամօր:

Երեքը միասին սկսան Աստուածամա՛յր, Աստուա- ծամա՛յր կանչել. այնքան ուժով կը պոռային որ զին- ուորները բարկացած, ստէպ խարազանի հարուածներ կու տային. լաւ որ փոքրիկներու լեզուն չէին հասկնար:

Բաղէշէն բաւական հարաւ իջեր էին. հսկայ բազ- մութիւնը շատ դանդաղ կը քալէր: Փոքրիկները, չես գիտեր յոգնած՝ թէ ներքին զգացումով, կանգ առին:

— Քալեցէ՛ք, պոռաց զինուոր մը:

Անոնք չչարժեցան: Գնաց չուանէն բռնեց քաշկու- տելու համար, սակայն չկրցաւ տեղերնէն շարժել. ե- կաւ ուրիշ զինուոր մը ոյժ տալու. նորէն չկրցան. ե- կաւ երրորդ մը, չորրորդ մը:

— Ասոնք կախարդուած են, ըսաւ զինուոր մը:

— Զարնենք սպաննենք, աւելցուց ուրիշ մը:

— Ո՛չ, շատ սիրուն փոքրիկներ են, կրնանք սուղ ծախել, վրայ բերաւ երրորդ զինուոր մը:

— Դիւրաւ ալ մեր կրօնքին կը դառնան:

Մանուկները դարձեալ Աստուածամա՛յր, Աստուա- ծամա՛յր կը կանչէին:

— Ի՞նչ կը պոռան ասոնք, ըսաւ մէկը:

— Անշուշտ իրենց մայրերը կը կանչեն, պատասխանեց ուրիշ մը:

— Չէ՞ք կրնար քսան, երեսուն հոգի այս տատրակները քաշել տանիլ, պոռաց անդիէն բարձրաստիճան սպայ մը:

— Տէր իմ, կախարդուած են, ժայռի պէս ծանր են:

— Ձգեցէք ինձի, ըսաւ սպան, եւ սուրը քաշեց երեք տատրակները մէկ հարուածով սպաննելու. երեք հատ պակաս կամ աւելի՝ նոյնն է:

Մուրը ձեռքը՝ օղին մէջ քարացած մնաց: Այդ պահուն փողերու ձայներ լսուեցան, բանակին կոնակէն փոշի բարձրացաւ:

— Հայկական բանակը, հայկական բանակը, կանչեց թշնամին սարսափով:

Գոռ Մարզպետունին էր, Աշոտ Ողորմածի զօրավարը, որ կայծակի պէս կը յարձակէր թշնամիին վրայ: Յանկարծ սարեր, ձորեր՝ հայ զինուորներով լեցուեցան: Համտուն դարձուց իր ձին դէպի արշաւոյ բանակը եւ հրամայեց պատերազմի փողերը հնչեցնել: Առաջինը ինքն եղաւ կատաղօրէն յարձակելու, բայց դժուար էր Մարզպետունիի ձեռքէն ազատիլ: Առաջինը ինքը եղաւ որ մահացու նետ մը ստանալով ինկաւ գետին: Իր բանակը ցրուեցաւ եւ հայ զինուորները շրջապատեցին գերիները: Պատերազմի կոպիտ աղաղակէն վերջ, ցնծութեան երգն ու աղօթքը յաջորդեցին:

Երեք փոքրիկները իրարու կապուած կը շարունակէին Աստուածամայր, Աստուածամայր կանչել:

— Ինչո՞ւ չէք քակեր այս խեղճ պղտիկները, ըսաւ մեծ զօրավարը անոնց մօտենալով:

— Կ'ուզէիք որ դուք քակէիք, պատասխանեց ծերունի մը:

— Ինչո՞ւ:

— Մեռնիմ Տիրամօր զօրութեանը. հրաշք, հրաշք, տէր զօրավար, ըսաւ ծերունին գրեթէ լալով: Երեսուն արար զինուորներ չկրցան քաշկուտել այս երեք ձագուկները: Ժամերով աշխատեցան, եւ ասիկա Աստուած ըրաւ, որպէսզի դուք հասնէիք մեզ ազատելու համար:

— Այո՛, հոն ուր հաւատք կայ՝ Աստուած կայ, ըսաւ Մարզպետունին յուզուած շեշտով:

Չուանը կտրեց իր սուրով. պրկուած պարանին տեղերը կապուտցեր էին:

— Քիչ մը ձէթով շփեցէք կապուած տեղերը, հրամայեց քովիններուն:

— Ովսաննաներով գիրենք պիտի տանինք, ըսաւ ծերունին:

— Ո՞ւրտեղացի էք, վաւակներս, հարցուց զօրավարը:

— Բաղէշէն են, տէր իմ, պատասխանեց ծերունին. ես ալ նոյն քաղաքէն եմ:

— Ծատ լաւ, պատերազմական կառքի մը մէջ դէր, հրամայեց քովի սպային, եւ Բաղէշ տար:

Սպան իսկոյն կատարեց զօրավարին հրամանը, եւ երկու ճերմակ ուժեղ ձիեր սկսան քաշել երկաթէ անիւներով կառքը: Անոնք սուրացին դէպի հիւսիս: Փոքրիկները շատ ուրախ էին, ծափ կը զարնէին եւ անհամբեր կը սպասէին իրենց քաղաքին բլուրները տեսնել:

— Տե՛ս, տե՛ս, Միրանեձին Աստուածամանի վանքը, ըսաւ ամէնէն մեծը Մուշեղ՝ իր քովինին:

— Սմբատ, դուն բան մը կը տեսնե՞ս, հարցուց երկրորդին ամէնէն փոքրիկ Գեղամը:

— Հոն, հոն, եօթը խորան Աստուածամանի եկեղե-

ցին ալ կը տեսնուի, ըսաւ Մուշեղ ցուցամասը երկա-
րելով:

Սպան կը զուարճանար լսելով մանուկներուն ու-
րախ կանչերը: Բաղէչ սկսաւ երեւնալ. տղաք հաճոյ-
քով ծափ զարկին:

— Կենա՛նք, պոռացին երեքը սպային:

Սպան կանգնեցուց փրփրած ձիերը:

— Ի՞նչ կայ, հարցուց:

— Կ'ուզենք հոս վար իջնել:

— Այս մօտիկ բլրան վրայ Տիրամօր ուխտատեղի
մը կայ, պիտի երթանք աղօթենք, քացատրեց Մուշեղ:

Սպան վար իջեցուց փոքրիկները, որոնք ցատկելով
բարձրացան բլուրը. հոն վաղուց մնացած հին պատի
մէջ խորանիկ մը կար, մէջը Տիրամօր պատկերով: Երեք
փոքրիկները ծնրադրեցին խորանին առջեւ եւ ձեռքեր-
նին իրար միացնելով, երկար մնացին:

— Երբ մեծնամ, ըսաւ Գեղամ, հոս Աստուածամօր
եկեղեցի մը պիտի շինեմ:

— Ես ալ նոյնը կը մտածէի, կրկնեց Սմբատ:

— Ինչո՞ւ հիմակուրնէ չաշխատինք եկեղեցին շի-
նելու, խորհրդածեց Մուշեղ:

Երկու փոքրիկները իրարու երես նայեցան եւ ժլա-
տեցան:

— Այո՛, ամէն բան կարելի է, ըսաւ Սմբատ, երբ
Աստուածամօր կամքն ըլլայ:

— Շատ փառաւոր եկեղեցի մը, բարձր դմբէթով՝
որ քար նետես չհասնի, ըսաւ Գեղամ:

— Վաղն իսկ, ըսաւ Մուշեղ, դռնէ դուռ իյնանք
եւ քար ու փայտ ուզենք:

Երկրորդ օրը անոնք դացին քարակոփի մը եւ ըսին.

— Բարի մարդ, մեզի քար մը կու տա՞ս, եկեղեցի
պիտի շինենք Աստուածամօր:

Մարդը զարմանքով նայեցաւ երեք փոքրիկներուն,
ժպտեցաւ ու ըսաւ.

— Մ էկ քար չէ՛ տասը քար տամ, բայց ո՞ւր պիտի
շինէք եւ ո՞վ պիտի կրէ քարերը:

— Հոն, այն բլրան վրայ պիտի շինենք, ցոյց տուին
երեքը միասին:

— Երանի այն ազգին որ այսպիսի գաւազներ ունի,
ըսաւ քարակոփը: Քսան կոփուած քարեր պիտի տամ,
գաւազներս, պոռաց անոնց ետեւէն՝ որ դուրս ելած էին
արդէն:

Դիմացի ճամբայէն սայլ մը կու գար փայտէ անիւ-
ներով զոր երկու զոյգ եզներ կը քաշէին:

— Բարի մարդ, մօտենալով ըսին տղաք, Աստու-
ծոյ սիրոյն, քսան հատ տաշուած քարեր ունինք, քա-
րակոփը տուաւ մեզի, այն բլրան վրայ կը տանի՞ս, հոն
Աստուածամօր համար եկեղեցի մը պիտի շինենք:

— Քանի Աստուծոյ սիրոյն համար է, յօժարու-
թեամբ կը տանիմ, պատասխանեց սայլապանը: Ինքը
եւ քարակոփը բեռցուցին քարերը եւ ճամբայ ինկան
դէպի բլուրը: Երբ քարերը թափեցին բլրան գազաթը,
տղաք կառապանը առաջնորդեցին Տիրամօր պատկերին
առջեւ:

— Տէ՛ս, ըսին, Տիրամայրը տուն չունի, հոս խեղճ
ու մինակ է, իրեն համար եկեղեցի պիտի շինենք:

— Մեռնիմ ջեղի, հայ աղք, ըսաւ սայլապանը, որ
այսպիսի գաւազներ ունիս: Բայց դուք ի՞նչպէս պիտի
շինէք, շատ փոքր էք, յետոյ դրամ ունի՞ք:

— Դրամը ի՞նչ պիտի ընենք, պատասխանեց Մու-
շեղ, Աստուած ամէն բան կու տայ:

— Է՛հ, Աւետարանին մէջ ալ գրուած է, թէ հաւատքը լեռներ կը շարժէ:

Քանի մը օր վերջ Բաղէշ հասան գերիները, ամէն մարդ գտաւ իր սիրելիները եւ ուրախացաւ:

— Երեք հրեշտակները, երեք հրեշտակները, կը կանչէր ամէն եկող:

Մուշեղ, Սմբատ եւ Գեղամ իրենք ալ խառնուեր էին բազմութեան. ծերունին տեսաւ փոքրիկները եւ մօտեցաւ ու գրկեց զանոնք:

— Ո՞վ են այս տղաները, կը հարցնէին քաղաքացիները:

— Մեր փրկարարներն են, պատասխանեց արցունքոտ ծերունին: Եւ պատմեց եղածը:

— Պէտք է ուրեմն զիրենք վարձատրել:

— Եպիսկոպոսին, եպիսկոպոսին տանինք որպէսզի զիրենք վարձատրէ:

Բազմութիւնը ուսերուն վրայ առնելով երեք փոքրիկները, դնաց առաջնորդարան:

— Ո՞վ են այս հրեշտակները, հարցուց եպիսկոպոսը:

— Բաղէշի ազատարարները, պատասխանեց ժողովուրդը:

Եպիսկոպոսը շոյեց երեքն ալ, ըսելով.

— Մեծ է Աստուած, որ տկար արարածներով ալ իր կարողութիւնը ցոյց կու տայ:

— Մենք կը խնդրենք որ զիրենք տանիք մեր Ողորմած Թագաւորին, որպէսզի վարձատրէ զիրենք:

— Աղքատ ընտանիքի տղաներ են, ըսաւ ուրիշ մը:

— Ի՞նչ կը փափաքէք զաւակներս, ըսաւ եպիսկոպոսը:

— Ո՛չ դրամ կ'ուզենք, ո՛չ ալ թագաւորը տեսնել,

սրբազան հայր, ըսին երեք փոքրիկները, մենք ուխտած ենք այն աւերակ բլրան վրայ Տիրամօր եկեղեցի մը շինել:

— Որ շատ գեղեցիկ եւ բարձր ըլլայ, աւելցուց Գեղամ, քար նետես՝ գմբէթին չհասնի:

— Եղիցի, եղիցի, գոչեց բազմութիւնը:

— Տիրամայրը ներշնչած է, ըսաւ եպիսկոպոսը:

— Այո՛, հոն բլրան վրայ խեղճ ու մինակ է Աստուածամայրը. ո՛չ տուն ունի, ո՛չ այցելու, ըսաւ Սմբատ:

— Մենք պիտի հաւաքենք պէտք եղածները, ըսաւ Գեղամ:

— Բոլոր քաղաքը ձեզի հետ է, վստահացուց ծերունին:

— Ուրեմն գործի, հրաման տուաւ եպիսկոպոսը:

Ամիս մը շանցած՝ աւերակ բլրան վրայ կը բարձրանար կանաչ քարերով եկեղեցին. մանուկները միշտ հոն էին, կարծես իրենք ըլլային վարպետները: Անոնք տունէ տուն կը շրջէին՝ քար, փայտ, երկաթ խնդրելով:

Տարի մը չտեւեց՝ Աստուածամօր եկեղեցին արդէն շինուած էր: Քաղաքը կը պատրաստուէր հանդիսաւոր օծումին. փողոցները զարդարուած էին, գորգեր փռուած պատշգամներուն վրայ, մինչեւ բլուրը ծաղիկներ ցանուած, դալարներով կամարներ բարձրացած:

Ամբողջ Հայաստանի մէջ լսուեցաւ հրաշալի լուրը: Թագաւորը ուղեց անձամբ ներկայ ըլլալ նաւակատիքին, եւ գմբէթին արծաթեայ խաչը ինքը նուիրեց:

Այդ օօրը Վերափոխման տօնն էր. արքայական դուռը տողանցքի կանգնած էր քաղաքէն մինչեւ բլուրը. նիզակները կը փայլէին արեւին տակ. անոնց մէջէն պիտի անցնէր արքայական ոսկեղէն կառքը:



Մանուկները բաց քաղուցին սիրուն քաչուները...

Երեք փոքրիկները գացին եպիսկոպոսին. խնդիրք մը ունէին.

— Սրբազան Հայր, ըսին, գիտե՞նք թէ Հայ ժողովուրդը իր ամենագեղեցիկ ոչխարներն ու գառները պիտի նուիրէ, մատաղ ընելու համար, բայց մենք կը խընդրենք որ աղքատ՝ բայց թանկագին նուէր մը տան Բաղէշի մանուկները. այս եկեղեցին մանուկներու եկեղեցին է, թող ամէն տղայ տատրակ մը բռնած թափօրով բարձրանայ մինչեւ եկեղեցին:

— Այդպէս թող ըլլայ, ըսաւ եպիսկոպոսը:

Տօնին օրը հազարաւոր մանուկներ եւ աղջնակներ սպիտակ հագուած, վարդերով եւ ծաղիկներով պսակուած, արեւաշող նիզակներու մէջէն կատարեցին մանկութեան եւ սիրոյ թափօրը. ամէն մէկը բռնած էր տատրակ մը՝ ամէն դոյնէ վիզերով:

Երբ պղնձէ կոչնակները առաջին անգամ հնչեցուցին՝ մանուկներ բաց թողուցին սիրուն թռչունները, որոնք եօթն անգամ շրջան ըրին եկեղեցիին շուրջը, եւ թառեցան դձրէթներու ու տանիքին վրայ:

Կէսօրուան մօտ երկինքէն յանկարծ ոսկեղէն ճառագայթ մը ինկաւ եկեղեցիին վրայ, բոլոր թռչունները ոսկի դոյն առին եւ կամաց կամաց թմրութիւն մը եկաւ իրենց վրայ. թեւերնին ամփոփեցին ու թռչեղէն արձանիկներ դարձան Աստուածամօր եկեղեցիին վրայ:

Այդ օրէն՝ այդ նորաչէն եկեղեցին կոչուեցաւ Տաւրակաբնակ Աստուածածին:

Անիի մայր եկեղեցիի ճակատին վրայ՝ դրան մօտ կայ տակաւին անշուք եւ փոքրիկ խաչ մը, որ Հովիւի խաչ կը կոչուի եւ հաւատացեալներէն մտնող ելլող զայն կը համբուրէր հրաշք մը ընդունելու լի հաւատքով։ Կոշտ քարի մը վրայ առանց արուեստի դժուած խաչը երբեք չէր յարմարեր այն սրբատաշ քարերուն հետ, որոնք վարդապետն, կապոյտ եւ դեղին՝ կարծես ծիրանի դօտին հիւսած էին, երկինքէն առնելով իրենց դոյները։

Մայր տաճարի շինութեան օրերէն հոն էր այդ խաչը, վրան բարձրաքանդակ Յիսուս մը՝ որ տրտմազին էր եւ հազիւ ճանաչելի իր կերպարանքին մէջ։ Բայց ժողովուրդը ամէն օր կը համբուրէր զայն, մտնող ելլող՝ երեսը կը խաչակնքէր։ Ոչ մէկ տեղ գրուած էր թէ ո՞վ դրած էր հոն այդ խաչը, բայց ամէնքը զայն կը կոչէին Հովիւին խաչը ու կը համբուրէին։

Անի քաղաքին փառաւոր պալատներէն, եկեղեցիներէն եւ անունէն աւելի մայր տաճարը հուշակուած էր։ Ամէն կողմ անոր մասին կը խօսուէր, եւ զարմանազան պատմութիւններ կը շրջէին բերնէ բերան. ոմանք կը համարէին թէ Աստուած տեսիլքով յայտնած էր Կատրամիտէ թագուհիին՝ անոր ձեւը եւ դեղեցկութիւնը. ուրիշներ կ'ըսէին թէ Նրուսաղէմի Ս. Յարութեան տա-

ճարէն քար մը թուեր եկեր է Անի եւ մէկ գիշերուան մէջ շինուեր է եկեղեցին. ուրիշներ ալ կը հաստատէին թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը շինած էր զայն՝ ինքը գիշերատեն քարերը կրելով Արարատի կողերէն:

Այս զրոյցները հասած էին մինչեւ Հեր եւ Զարեւանդ դաւառը, որ պահակ կեցած էր Հայաստանի՝ դէպի Պարսկաստանի կողմը: Ամէն մարդ երանի կու տար անոր՝ որ արժանի կ'ըլլար անոր պատին մէջ քար մը դնելու: Սանդուղի աստիճան մըն է, կ'ըսէին, որ պահով երկինք կը տանի: Այսպէս դէպի Կապուտան լիճը նայող լեռներուն վրայ աղքատ հովիւ մը կար, որ միայն սարեր տեսած էր, պսպղուն աստղեր, լեռնային ծաղիկ եւ ոչխարներու անթիւ հօտեր, իր ախանջին ալ հասած էին Անիի մայր եկեղեցիին հրաշալի պատմութիւնները: Սիրտը կ'այրէր եւ միշտ արտում էր ու կ'ըսէր.

— Ես ինչո՞ւ աղքատ, տգէտ հովիւ ծներ եմ. աստղերէն, սարերէն ու ոչխարներէն զատ բան չեմ տեսած եւ աշխարհի մէջ հրաշքներ կ'ըլլան. Աստուած ինչո՞ւ զիս այսպէս ստեղծած է: Կ'ըսեն թէ «Երանի անոր որ քար մը կը դնէ այդ երկնաշէն եկեղեցիի պատին մէջ, Աստուծոյ տունը եւ հայրենիքը շինած կ'ըլլայ»:

Հովիւը ձգեց սարերը, առաւ իր ոչխարները եւ իջաւ Հեր քաղաքը: Կոշտ եւ վայրենի կերպարանք մը ունէր, մարդիկ կը զարմանային իր վրայ, իսկ ինքը երկչոտ աչքերով կը դիտէր զանոնք: Ծախեց իր ոչխարները, գնաց քարակոփի մը քով եւ ըսաւ.

— Ի՞նչ պէտք եմ ընել քարի մը վրայ խաչ մը քանդակելու համար:

— Ամէնէն գիւրիւն միջոցը եղունգներով փորելն է, ըսաւ զինքը ծաղրելով:

— Փառք Աստուծոյ, պատասխանեց հովիւը եւ գնաց:

Ճամբան դտաւ վարդագոյն քար մը, որ մեր երկրին մէջ շատ կան, դարձուց ասդին, դարձուց անդին եւ աչքին դեղեցիկ երեւցաւ, թէպէտ անտաշ էր: Նըստաւ քարի մը վրայ եւ սկսաւ եղունգներով փորել մէկ երեսը: Աջ փթամատի եղունգը մաշեցաւ եւ հաղիւ տեսանելի խաչածեւ գիծ մը ձգած էր:

— Կարգը քուկդ է, իմ հուժկու ցուցամատ, ըսաւ ինքնիրեն, եւ ցուցամատը սկսաւ տենդազին աշխատիլ եւ արիւն հոսիլ:

— Դուն մատնեմատ, գծէ Յիսուսի սիրտը այս խաչին վրայ, եւ մատնեմատը դարձաւ ծուռ ու մուռ գծեց սիրտ մը: Միջամատը գծեց Յիսուսի կողերն ու ոտքերը:

— Իմ փոքրիկ ճկոյթ, դարձաւ մատներու ամէնէն փոքրիկ եղբորը, դուն՝ փշէ պսակը շինէ: Յիսուս առանց Վիշտերու եւ փշէ պսակի չմեռաւ մեր սիրոյն համար:

Գծեց եւ փշէ պսակը, ամէն մէկ մատէն արիւն կաթեց խաչին վրայ: Քարը ծոցը դրաւ, առաւ իր մախաղը եւ ճամբայ ինկաւ դէպի Անի:

Անին շատ հեռու էր իր աշխարհէն. քալեց գիշերը, քալեց ցորեկը:

— Աստուծոյ սիրոյն, ո՞ւր է Անին, կը հարցնէր հանդիպողին:

— Հոն, շատ հեռուն է, կը պատասխանէին, մատով ցոյց տալով անորոշ հիւսիսը:

Հասաւ Մակուայ լեռները:

— Անին հո՞ս է, հարցուց զիւղացիի մը:

— Ո՛չ, եղբայր, դեռ պէտք է քալես, քառասուն օր, քառասուն գիշեր:



Նստաւ քարի մը վրայ եւ սկսաւ եզրօնգրեցնել փորձի...

— Օրհնեալ է Աստուած, պատասխանեց հովիւը, շարունակելով իր ճամբան:

Մակուայ քարէն դէպի հիւսիս կը տարածուէր ընդարձակ անտառ մը, ուսկից ճեղքելով կ'անցնէր լայն արահետ մը: Մտաւ անտառը եւ հաղիւ ծառերը ծածկեցին բացաստանը.

— Կեցի՛ր, լսեց ծառերու ետեւէն:

Երեք հոգի դուրս ելան, դաժան դէմքերով եւ զինուած ազեղով ու սուրով:

— Յանձնէ՛ ինչ որ ունիս:

Ու խոյացան վրան: Հովիւը ծոցէն հանեց խոշոր քար մը:

— Յիմար է, ըսաւ մէկը եւ քարը մէկդի նետեց:

— Դրամ, դրամ հանէ, ըսաւ ուրիշ մը:

— Աստուած գիտէ թէ դրամ չունիմ, եղբայրներ, պատասխանեց հովիւը:

— Խեղճ ուխտաւոր մըն է, ըսաւ առաջին աւազակը:

— Մեղք ըրինք, վրայ բերաւ երկրորդը:

— Այո՛, այս ճամբան Բաղրեւանդի դաշտը կը հանէ, անկից Սուկաւէտ լեռները եւ ապա Ծիրակի դաշտը կ'ելլէ. հոն է մեր փառապանծ Անին:

— Աղօթէ՛ մեզի համար ալ մայր տաճարին առջև:

Հովիւը քարը ծոցը դրաւ եւ ճամբայ ինկաւ: Անցաւ Բաղրեւանդը, անցաւ Սուկաւէտ լեռները եւ մտաւ Ծիրակի դաշտը:

Օղբ գարնանային էր. գիւղացիները հարուստ դաշտին մէջ իրենց այգիներու խաղողի զով չուբին՝ կը վայելէին Հայաստանի անոյշ կեանքը: Գազիկ առաջինի հարստութեան եւ երջանկութեան տարիներն էին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱՅԵԱՆ ԳՈՒԼԻՆ-ՊԵՐՏԻՊ

Հովիւը հասաւ գիւղ մը. բարձր գմբէթ մը կը տեսնուէր եւ մօտիկը հաստ պատերով շէնք մը:

— Անիի մայր տաճարը հո՞ս է, հարցուց գիւղացիի մը:

— Մարդ Աստուծոյ, խելքդ թռե՞ր է, այս եկեղեցին անոր քով դաճած թուի մըն է: Կ'երեւի թէ օտարական ես: Ուսկի՞ց կու դաս:

— Աստուծոյ հրամանով հեռու աշխարհէ կու դամ:

— Կ'երեւի թէ ուխտաւոր մըն ես:

— Ո՛չ, կ'երթամ Անի, սուրբ տաճարի պատի շինութեան իմ քարս ալ տանելու:

Գիւղացիին պահ մը քահ, քահ խնդաց:

— Այ մարդ, խելա՞ն ես. մեր փառապանծ թագուհին քու քարի՞դ պէտք ունի:

— Ամէն մարդ իր ունեցածը կը տանի. թագուհին թող ոսկիով շինէ պատերը. թագաւորը աղամանդ ու մարդրիտ շարէ. ես աղքատ հովիւ եմ, ես ալ քար մը միայն կրնամ դնել:

— Ուխտդ կատար, հովիւ, ըսաւ գիւղացիին եւ բահը ուսին զարնելով մեկնեցաւ:

— Աստուծոյ սիրոյն, կանչեց հովիւը ետեւէն, ո՞րն է ճամբան Անի երթալու համար:

— Բռնէ այս ճամբան որ դէպի հիւսիս կը մեկնի, շիտակ Անի կը տանի. դեռ երկու օր եւ երկու գիշեր ունիս հասնելու համար:

— Օրհնեալ է Աստուած, պատասխանեց հովիւը ու ճամբայ ինկաւ:

Նա քիչ կը քնանար ու շատ կը քալէր, տրեխները արդէն մաշեր էին, կապած էր պատառոտուն լաթեր եւ ոտքերէն կաթիլ կաթիլ արիւն կը հոսէր:

Երկու օր յետոյ ընդարձակ դաշտի մը մէջ տեսաւ բարձր պարիսպներ, աշտարակներ ու գմբէթներ:

— Արդեօք դրախտի դո՞ւռը հասայ, մտածեց ինքնիրեն. գիտեմ թէ դրախտը Հայաստանի մէջ էր: Անգուսպ փափաք մը կը զգար հարցնելու անցորդի մը: Մեր գիւղացի մը ձի նստած անցաւ իր քովէն:

— Քեռի, քեռի, կանչեց հովիւը, Անի քաղաքը դեռ շատ հեռո՞ւ է:

— Կո՞յր ես. ահա առջեւդ է, ըսաւ ու քեց իր ձին:

— Օրհնեալ է Աստուած, ըսաւ հովիւը եւ արագեց իր քայլերը:

Երկու ժամ յետոյ արդէն հարաւային դրան առջեւն էր: Բազմութիւնը կ'ելլէր ու կը մտնէր: Ճոխ զգեստներով իշխաններ, տիկիներ՝ հագուած ծիրանի վերարկուներ, վաճառականներ լայն մուշտակներով, զինուորականներ սուրերը մէջքերնուն: Հովիւը վախցաւ ու ամչցաւ ներս մտնել իր աղքատ զգեստով, որ ոչխարի կաշի մըն էր: Վիզը ծուռ՝ մնաց դրան առջեւ. ելլողներէն ոմանք զինքը հրեցին ու անցան. ուրիշներ՝ ոչխարի մորթը կը քաշէին. բայց նա քարը սեղմած իր կուրծքին՝ համբերութեամբ կը դիտէր մայր դռնէն ներս:

— Խեղճ աղքատ մըն է, ըսաւ հարուստ վաճառական մը եւ դրամ երկարեց տալու համար:

— Շնորհակալ եմ, տէր իմ, ըսաւ հովիւը, ես մուրացկան չեմ. մեծ փափաք ունիմ մտնել քաղաքը եւ ռեսնել հրաշքով շինուած մայր եկեղեցին: Աստուծոյ սիրոյն, կրնամ մտնել:

— Աստուծոյ անունով ամէն դուռ կը բացուի, մը-

տի՛ր, բարի մարդ. Անին ամէն Հայու տունն է, պատասխանեց վաճառականը եւ մեկնեցաւ:

Հովիւը քաջալերուած՝ ներս սահեցաւ. երկչոտ քայլերով անցաւ մայր պողոտան եւ ահա իր աչքերուն առջեւ պարզուեցաւ հսկայ շէնք մը, կարմիր, կապոյտ, դեղին սրբատաշ քարերով շինուած, կարծես երկինքէն իջած ծիրանի դօտի մըն էր:

Նայեցաւ, երկա՛ր նայեցաւ, հազար անգամ երեսը խաչակնքեց, սիրտը լեցուեցաւ ու սկսաւ արտասուել: Ոչ ոք ուշադրութիւն կը դարձնէր իրեն. ոչ ոք գիտէր թէ մեծ սիրտ մը կ'ալեկոծէր հայրենիքի փառքին առջեւ: Գիշերը քնացաւ տաճարին դիմաց յղկուած քարերու մէջտեղ. օդը անոյշ էր ու տաք: Շատ գեղեցիկ բաներ երազեց: Տեսաւ իր ծոցին քարը մայր դրան մօտ ազուցուած. անկից լոյս կը ծորէր եւ վրայի Յիսուսը քաղցր դէմքով իրեն կը նայէր:

Յաջորդ օրը քաղաքին մէջ աղմուկ փրթաւ, մեծ իրարանցում կար, զինուորները կը խուզարկէին անցնող դարձողին վրան. դռները փակուեցան, ոչ ոք կըրնար մտնել կամ ելլել: Կատրամիտէ թագուհին գոհարներու տուփը դողցուած էր: Հովիւը ոչ մէկ աղմուկի ուշադրութիւն կը դարձնէր. նա անկուշտ աչքերով կը դիտէր մայր եկեղեցին, որ կարծես կը բարձրանար մինչեւ երկինք հասնելու: Շրջեցաւ չորս կողմը, համբուրեց պատերը, սիւները: Ի՞նչպէս կրնար իր քարը տեղ մը ազուցանել. պատերը յղկուած էին, կապոյտ, կարմիր, դեղին քարերը զիրար կը համբուրէին. փոքրիկ ճեղք մը, ասեղ խոթելու ծակ մը չկար: Քարը կուրծքին սեղմած մինչ կը շրջէր՝ երկու գինուած մարդիկ վրան ինկան.

— Ահա գողը, ըսաւ մէկը:

— Թշուառականը իր ծոցը պահած է գողունի ապրանքը, վրայ բերաւ, ընկերը:

— Այսպէս կապկպած տանինք, որպէսզի թագուհին աչքերովը տեսնէ իր ապրանքը:

Հովիւը բան չէր հասկնար եղածէն: Զինքը կապեցին հաստ փոկերով եւ քաշելով տարին. անցան մայր փողոցէն որ կը տանէր արքունի պալատը: Ամբոխը հայհուհներով կը հետեւէր իրեն.

— Վա՛յ քեզի, գող աւագակ:

— Կոպիտ լեռնցի, կ'ըսէին ուրիշներ:

Ոմանք քարեր առած՝ կ'ուզէին հոն սպաննել, բայց զինուորները բռնութեամբ տարին զինքը պալատ: Հովիւը կուրծքին վրայ ամուր սեղմած էր քարը: Կատրամիտէ թագուհին դուրս ելաւ տեսնելու համար թէ ո՛վ է այն յանդուգն գողը, որ յաջողեր էր պալատ մտնել եւ իր գոհարեղէնները տանիլ:

Հովիւը դողդողալով կեցաւ իր առջեւ. գրեթէ մերկ էր եւ ոչխարի ճերմակ բուրդով կաշին հազիւ կը ծածկէր իր մարմինը:

— Դո՛ւրս քաշեցէք ծոցը պահածը, հրամայեց թագուհին:

Զինուոր մը կոշտութեամբ բացաւ հովիւին կուրծքը եւ ահա տաշուած քար մը, վրան հազիւ նշմարելի Յիսուսով խաչ մը դժուած:

— Հասարակ քար մը, լսուեցան զանազան ձայներ:

— Ի՞նչ է այս քարը, որ ծոցդ պահեր ես, հարցուց թագուհին:

— Իմ տիրուհիս, իմ սիրելի թագուհիս, ըսաւ հովիւը դողալով: Ես աղքատ հովիւ եմ Հեր քաղաքի լեռ-

ներուն վրայ, շտեցի որ դուն հրաշքով եկեղեցի մը շիներ ես Աստուածամօր ի պատիւ. ո՛չ ոսկի ունէի ընծայ բերելու, ո՛չ ազամանդ՝ Տիրամօր նկարը զարդարելու. այս քարը միայն կրցայ բերել, վրան իմ եղունգներովս դժեցի խաչ մը եւ Յիսուսի պատկերը, իսկ մատներուս արիւնով կարմիր ներկեցի:

Թագուհին առաւ քարը, տեսաւ անոր վրայ անարուեստ դիժեր, փշէ պահկով Յիսուս մը՝ սիրտը խոցուած: Իր ճակատին տարաւ ու համբուրեց.

— Այս խաչքարը իմ շինած մայր տաճարէս աւելի հաճոյ է Աստուծոյ: Ո՛ր կ'ուզես որ դրուի, հարցուց հովիւին:

- Տաճարին ամէնէն խոնարհ մէկ անկիւնը:
- Փափաքդ պիտի կատարուի, բարի մարդ:


Հրամայեց լծել իր չորս սպիտակ ձիերով արքունի կառքը, իր քովն առաւ ոչխարի կաշիով զգեստաւորուած հովիւը եւ քշել տուաւ դէպի մայր տաճարը: Հովիւը կը դիտէր կառքին ոսկեղէն կազմուածները, ձիերու սանձերը եւ փափուկ բարձեր՝ որ կեանքին մէջ չէր տեսած: Ամբոխը զարմացած կը դիտէր արքունի կառքը եւ խեղճ հովիւը նստած փառաւոր Թագուհին կողքին: Երբ հասան մայր տաճարին առջեւ, Թագուհին հրամայեց որ կանչեն Մանուէլ ճարտարապետը եւ լաւադոյն քարակոփը: Երբ անոնք եկան, հրամայեց որ մայր դրան քովէն վերցնեն քար մը, եւ հոն գետեղեն հովիւին աղքատ խաչքարը:

Հովիւին աչքերը լեցուեցան ուրախութեան արցունքով, իր խաչքարը հիմա հրեղէն բան մըն էր իր աչքերուն, երկինք տանող սանդուղին մէկ աստիճանը:

Թագուհին նախ ինքը համբուրեց խաչքարը եւ երեք



Երկու գիճուած մարդիկ վրան ինկան...



Կեզն հովիւր նստած էր քաղաքի կողին, փառաւոր կառքին մէջ

անգամ խաչակնքեց իր ճակատը, ըսելով շուրջիններուն .

— Երանի՛ այն ազգին՝ որ այսպիսի մեծ հողիով զաւակներ ունի :

Ուզեց հովիւին ճոխ հանդերձներ եւ ընծաներ տալ, բայց նա մերժեց ընդունիլ, ու դարձաւ երկնքի մօտ՝ իր սարերը :

Այլ օրէն մայր տաճարը մտնող ելլող կը համբուրէր խաչքարը, հրաչք մը ընդունելու հաւատքով :

Արտակ Պալունի առաւօտ կանուխ արթնցաւ: Դը-
ղեակի դրան առջեւ իր գունդը կազմ ու պատրաստ էր
մեկնելու դէպի Աւարայր: Կը սպասէին որ փողերը մեկ-
նումի ազդանիչը տային:

Զօրավարը հագած էր արծաթափայլ զրահները,
արծուենիչ սաղաւարտը գլուխն էր, վահանը՝ ձախ թե-
ւին: Կերպարանքը բոլորովին փոխուած էր, այն հեղ
նու բարի մարդը հիմա եղած էր կատաղի մարտիկ մը,
սարսափելի մէկը: Մտաւ իր եօթնամեայ աղջնակին սե-
նեակը, որ կը ննջէր հրեշտակի անդորրանքով սպիտակ
կտաններու մէջ: Գրկեց քնաթաթախ աղջնակը, համ-
բուրեց ու լացաւ: Շողիկը իր աչքերը լայն լայն բացաւ
եւ վախցաւ այդ նոր կերպարանքէն, սաստիկ լաց մը
փրցուց եւ ուզեց մօրը գիրկը նետուիլ:

— Մի՛ լար, աղջիկս, ըսաւ հայրը, ես եմ, ըու
հայրիկդ:

Բայց Շողիկ չէր հաւատար հօրը խօսքերուն: Ար-
տակ հանեց իր դիմակալը եւ աղջնակը կամաց կամաց
վարժեցաւ հօրը բարի դէմքին, ծպտեցաւ ու գիրկն ին-
կաւ: Հայրը դարձեալ համբուրեց զայն ու գրեթէ չու-
զելով մօրը գիրկը դրաւ:

Իշխանուհի Զարմանդուխտ ամէն բան գիտէր. գի-

չերն ամբողջ լացեր էր Արտակի մեկնումին համար: Պատերազմները մայրերու եւ հարսերու համար դերեզմանի անդարձ ճամբաներ են:

Արտակ անդամ մ'ալ համբուրեց իր աղջիկն ու կիներ եւ դարձեալ երկու խոշոր արցունքներ ինկան աչքերէն. առաջին անգամն էր որ նա կու լար:

— Հնչեցուցէ՛ք փողերը, հրամայեց պատուհանէն:

Գալարուն եւ անգալար փողերն ու թմբուկները որոտացին հովտէ հովիտ: Զրահներու եւ վահաններու խոր շառաչ մը պատեց ամբողջ դղեակը:

Ան դուրս թռաւ իսկոյն դղեակէն, արցունքներու շղթան ուզեց սուրով կտրել: Անցուց դիմակալը երեսին, սաղաւարտին փետուրները առաւօտեան զեփիւռին հետ ծփացին, ու երբ ոտքերը կարմիր երիվարին ասպանդակներուն վրայ պիտի դնէր՝ մօտն էին արդէն մայր ու աղջիկ:

— Դուն կ'երթամ մեզ ո՞վ պիտի պաշտպանէ, ըսաւ տիկինը:

— Զեզ պաշտպանելու համար կ'երթամ, սիրելիս, դուն զիտես թէ ձեզ ո՞րքան կը սիրեմ:

— Ուրեմն մեր քով կեցիր, պաշտպանէ՛ մեզ, այս փառաւոր դղեակը աւերակ մի՛ թողուր:

— Բայց բան մը կայ այս աշխարհիս վրայ, սիրելիս, մեր սուրբ կրօնքն ու հայրենիքը՝ որոնք ո՛չ մէկ սիրոյ հետ չեմ կրնար փոխել: Երէկ չկարդացի՞ր Յովսէփ կաթողիկոսին ու վարդան Մամիկոնեանի նամակը. «Արտակ, եթէ վայրկեան մ'իսկ ուշանաս՝ պատմութիւնը քեզ իբրեւ դաւաճան պիտի դատապարտէ»: Ես կ'երթամ, սիրելիս, եթէ ողջ դառնամ՝ միշտ քուկդ եմ, իսկ եթէ մեռնիմ՝ իմ փառքս ու անունս այս դղեա-

կին վրայ պիտի սաւառնի սպիտակ արծուի պէս եւ հոն վերը մենք իրարու հետ պիտի ըլլանք յաւերժօրէն:

Կնոջ սիրտը չհամոզուեցաւ այս արիական խօսքերէն ու դարձեալ կրկնեց.

— Տխուր նախազգացում մը սիրտս կտոր կտոր կ'ընէ, կը զգամ թէ այրի պիտի մնամ ու այս աղջնակդ առանց հօր պաշտպանութեան, որք եւ թշուառ պիտի ըլլայ. թերեւս ես ու աղջիկդ դերի տարուիք Պարսկաստան, հոն աղախին ըլլալու անանուն կնոջ մը ձեռքը, եւ կամ կտաւ գործելու:

— Մի միայն պահակներու դիակներու վրայէն կըրնան թշնամիներ այս դղեակը մտնել. եթէ հարկ ըլլայ մեռնիլ պատրա՞ստ ես այս գերադոյն զոհին, պատրա՞ստ ես ազգիդ ու Պալուսիներու պատիւը պահել՝ կեանքդ տալով:

— Պիտի նախընտրէի մեռնիլ, ըսաւ Զարմանդուխտ, քան այդ լպիւրջներուն ձեռքն իյնալ:

— Եթէ մեռնիլը քրիստոնէին համար գեղեցիկ յաղթանակ մ'է՛՝ բաժնուիք ուրեմն առանց լալու, առանց ողբալու:

Արտակ կրկին համբուրեց իր կինն ու աղջիկը եւ նետուեցաւ երիվարին վրայ: Շեփոյնները անգամ մ'ալ հնչեցին եւ զօրասիւնը կազմուեցաւ բարձրաբերձ դղեակէն վար: Սեւ շուքի պէս բանակը առաջ կ'երթար. Զարմանդուխտ կը դիտէր թաշկինակը աչքերուն:

Հեռուէն լսուեցաւ մարտիկներու երգը.

Մենք զինուորներ ենք ուխտեալ
Պատերազմի սիրահար,
Մահն անոյշ է մեզ համար,
Մենք զինուորներ ենք ուխտեալ:

Մի՛ արտասուէ՛ք, հէ՛զ մայրե՛ր,
Հարսե՛ր դու՛ք մի՛ հառաչէ՛ք,
Յաղթանակի կ'երթանք մե՛նք
Բոլարս ուխտեալ գինուորներ:

Ամէն տան մէջ թող օրրեն
Հայրենիքի նոր գինուոր.
Կեանքն անոյշ է եւ աղուոր
Երբոր մարտի կը կանչեն:...

— Մայրի՛կ, ո՞ւր գնաց հայրիկը, ինչո՞ւ այդ երկաթները հագած էր: Ես հայրիկը կ'ուզեմ, թող շուտով գայ:

— Կու գայ, զաւակս, ըսաւ մայրը. երբ գինուորներու երգին վերջին վանկերը մարեցան հորիզոնին վրայ:

Իշխանուհի Զարմանդուխտ մտաւ դղեակը. պահակները վերցուցին մայր դրան կամրջակը ու լուծիւնը կապոյտ թեւերով իջաւ դղեակին վրայ:

Մայր ու աղջիկ մինակ էին այդ հսկայ-չէնքին մէջ: Սենեակները զարդարուած ոսկի դրուագներով, փորագրուած ընկոյզէ տախտակներով, կաշիէ բազմոցներով ու թանկագին դորգերով՝ իրեն համար կեանք եւ հաճոյք չունէին, ամբողջ դղեակը աւերակ կը թուէր, հսկայ շիրիմ մը՝ եւ ինքն ու աղջիկը մէջը թաղուած մեռելներ:

Օրերը կ'անցնէին միապաղաղ: Միծեռնակները կու գային ու կ'անցնէին, բոյն կը դնէին քիւերուն տակ, բայց իր սիրելին դեռ չվերադարձաւ:

— Մայրի՛կ, հայրիկը ե՞րբ պիտի գայ: Յաճախ կը հարցնէր Շողիկը:

Մայրը արցունքները ծածկելով կը պատասխանէր.
— Կու գայ, զաւակս, շուտով կու գայ:

Եւ Արտակ չէր երեւար. ո՛չ մէկ լուր կը բերէին պատերազմէն:

Մայրը ուր որ երթար՝ Շողիկ երբեք չէր բաժնուեր իրմէ. փոքրիկը կը զգար թէ ճօրը սիրտը կտորած է, կը կարծէր թէ գայն կը մխիթարէր երբ կ'ըսէր.

— Մայրի՛կ, հայրիկը պիտի գայ, շուտով պիտի գայ, եւ ուրախութեամբ ծափ կը զարնէր:

— Այո՛, պիտի գայ, աղջիկս, շուտով պիտի գայ, կը պատասխանէր մայրը ու սիրտն աւելի կը ճմլէր:

Այդ տարին պատերազմի տարի էր, ամէն դղեակի մէջ սուգ կար, ամէն մայր եւ հարս կ'արտասուէր, ամէն դղեակ սարսափի մէջ էր վայրկեանէ վայրկեան պաշարուելու վտանգէն:

Երեկոյ մը մայր ու աղջիկ ննջասենեակն էին. Շողիկ հագած էր իր սպիտակ դիշերանոցը եւ ձեռնամաձ ու ծնրադիր՝ անկողնին վրայ, ինչպէս նորարողը շուշան մը կ'աղօթէր. մայրը քովն էր, սիրտը կախուած աղջնակին վրայ:

— Մայրի՛կ, մայրի՛կ, տե՛ս, դուռը բացուեցաւ:

— Ո՛չ աղջիկս, դուռը գոց է, պառկէ, մի՛ վախնար:

— Տե՛ս հայրիկը, հայրի՛կը եկաւ:

— Պառկէ՛ աղջիկս, ըսաւ մայրը, այդ քու փափաքդ է, պիտի գայ, այո՛, պիտի գայ:

— Հայրիկն է, չե՞ս տեսներ, լոյսերու մէջ, ոսկի դրահներ հագած:

— Քուն եղբի հոգիս, ո՛չ ոք կայ հոս. այո՛, վաղը կը հասնի անպատճառ:

— Հայրի՛կ, հայրի՛կ, գոչեց աղջնակը, ու անկողնէն ելլելով վազեց դէպի դուռը: Թաթիկներով մէկը

կը գրկէր ու խոշոր համբոյրներ կու տար իր փոքրիկ շրթներով:

— Աղջիկս, երազ է, մի՛ հաւատար:

— Ո՛չ մայրիկ, հայրիկն է, գեղեցիկ՝ արեգակի նման. անոյշ դէմքը համբոյրի կը նմանի. ի՛նքն է, տե՛ս, ձեռքերը բացած գիտ կը կանչէ:

— Այո՛, աղջիկս, պիտի գայ, շուտով պիտի գայ եւ Շողի՛կ պիտի կանչէ գրան առջեւէն: Քուն եղիր հոգիս, համբոյրներդ իրեն պահէ: Պիտի գայ, աղջիկս, շուտով պիտի գայ հայրիկը...:

Աւա՛ղ, ինչո՞ւ երազ էր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|-----------------------------------|----|
| Անիէն քար մը բեր | 52 |
| Տաճատ Անճեւացին | 33 |
| Պակի սօլերը | 43 |
| Արաքս | 51 |
| Երախտագէտ բռնունները | 57 |
| Տատրակարնակ Աստուածածին | 65 |
| Հովիւին խաչը | 77 |
| Պիտի գայ, գաւակս... | 90 |